



ՄԱՍԼՈՅ ԱՐՉԱԿՈՒՐԳ

Հայաստանի անկախության վերականգնման 35-ամեակին առիթով «Ազդակ» լոյս պիտի չտեսնէ Երեքշաբթի, 22 սեպտեմբեր 2026-ին:

Մեր յաջորդ թիւը՝ չորեքշաբթի, 23 սեպտեմբեր 2026-ին:

ԽՍՐԱԳՐԱԿԱՆ

ԳԵՐԻՇԽԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՆԿԱԽԱՅՄԱՆ 35-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

Հայաստանի Հանրապետության վերականգնման տօնի Նշումին արդիական հնչեղություն ապահովելու որեւէ հրապարակագրական փորձ բնականաբար կանգ կ'առնէ եւ կը կեդրոնանայ հանրապետության անկախ կարգավիճակի գոյատեւման դիմաց երեւոյող մարտահրաւերներուն վրայ:

Անկախութիւնը գերիշխան կարգավիճակ կ'ենթադրէ, ինքնուրոյն որոշում կայացնելու կարողութիւն, անխախտ սահմաններ եւ այդ բոլորի պահպանման համար արտաքին հաւասարակշիռ քաղաքականութեան կիրարկում:

Պաշտօնական Երեւանը այսօր անկախութիւնը կ'ուզէ ընկալել բացառապէս Ռուսիոյ դաշնութեան ազդեցութենէն դուրս գալու գործընթացով: Խնդիրը սակայն միայն ռուսական ազդեցութիւնը չէ կամ տարբեր ռազմավարական ոլորտներու առումով Մոսկուայէն կախեալ ըլլալու երեւոյթը:

Հարցադրումի ճամբով քննարկումի նիւթ է Սիւնիքի նոր հաղորդողիներու բանեցման պարագային, հայաստանեան տարածքներով անցնող ամէն տեսակի ապրանքաշրջանառութիւն թէ երկաթուղիով կամ խողովակաշարերու ճամբով արտահանում-ներածումի շահին ուղղորդումը դէպի ամերիկեան ընկերութիւններ:

Գերիշխանութիւնն ու անկախութիւնը ինքնիշխան տարածքներ կ'ենթադրեն: Ազրայէճան ներխուժած է հայաստանեան գերիշխան տարածք եւ չի պարտաստիր հեռանալու այդ տարածքներէն:

Երեւանը կը նախապատրաստուի փոխել Սահմանադրութիւնը: Այս պահանջը վաղուց կ'արժարծեն Անգարան եւ Պաքուն, պայմանականացնելով խաղաղութեան գործընթացի յաջողութիւնը կամ համաձայնագիրներու ստորագրումը Սահմանադրութեան փոփոխութեամբ: Ինքնուրոյն որոշում տալու գերիշխան իրաւունքէն հեռու է յայտնապէս այս իրականութիւնը:

Վերանկախացումը կ'ենթադրէ Անկախութեան հռչակագիր. անոր յղում կատարած է այն Սահմանադրութիւնը, որուն գաւազան իրաւորոյթներուն դէմ կ'արտայայտուին իշխանութիւնները:

Անկախութեան հռչակագիրը ունի այնպիսի կէտեր, զորս սահմանադրագրծելու ծրագիր ունի իշխանութիւնը:

Անկախութեան օրը կը Նշուի ներխուժած տարածքներով, թուրքազրպէճանական կողմի պահանջներու ընդառաջումներու յանձնառութիւններով եւ Մոսկուա-Արեւմուտք առճակատումներուն միջեւ ոչ անպայման հաւասարակշռուած քաղաքականութիւն վարելու տուեալներով:

Անկախ պետականութիւնը բացարձակ արժէք է, որմէ նահանջ կատարելու որեւէ տրամադրութիւն, առաւել եւս առնուող քայլ, ընդունելի չի կրնար ըլլալ անկախօրէն գոյատեւելու կամք արտայայտած ժողովուրդին կողմէ:

Գերիշխանութիւնը պահպանելը մեր պարագային պայմանաւորուած է նաեւ աշխարհաքաղաքական ճակատումներուն մէջ չներքաշուելու, հաւասարակշիռ արտաքին քաղաքականութիւն վարելու հմտութեան տիրացած պետութեամբ: Ներագգային առումով ազգը համախմբելու կարողականութիւնը ունենալու պայմանին կողքին:

ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 111-ԱՄԵԱԿԻ ԵՒ ԱՅՆՃԱՐԻ ՀԻՄՆԱԳԻՈՒԹԵԱՆ 87-ԱՄԵԱԿԻ ՀԱՆԳԻՍԱՒՈՐ ՆՇՈՒՄ



Անցնող շաբաթավերջին, կազմակերպութեամբ ՀՀԴ «Կարմիր լեռ» կոմիտէի դաստիարակչական-քարոզչական յանձնախումբին, Այնճար հայաւանին մէջ տեղի ունեցան Մուսա Լե-

րան հերոսամարտի 111-ամեակի եւ Այնճարի հիմնադրութեան 87-ամեակի հիմնական հանդիսութիւնները եւ արարողութիւնները:

Շար.ը՝ էջ 12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ԿԱՏԱՐՈՒՅԱՒ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՁ



Հայաստանի Հանրապետության վերանկախութեան 35-ամեակին առիթով, կիրակի, 20 սեպտեմբեր 2026-ին, օրհնութեամբ Արամ Ա. վեհափառ հայրապետին, նախագահութեամբ կաթողիկոսարանի «Կիլիկիա» մատենադարանի եւ ձեռագիրներու ու հնատիպերու բաժանմունքներու տեսուչ Շահան արք. Սարգիսեանի, մասնակցութեամբ Կիլիկեան ուխտի միաբան հայրերու եւ

հաւատացեալներու, Անթիլիասի մայրավանքի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ մատուցուեցաւ սուրբ եւ անմահ պատարագ, որուն ընթացքին կատարուեցաւ Հանրապետական մաղթանք (Գոհաբանական աղօթք) եւ Հայաստանի Եռագոյն դրօշի օրհնութիւն: Օրուան պատարագիչն էր Առաքել վրդ. Գատեհճեան:

Շար.ը՝ էջ 7

ԸՍՐՇԱՍՄԱՐՏ


ԱՐՄԵՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՌԱՖ-Ի ԱՆՈՅԵԱՆ. ԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ ՆՈՒԻՐԵՅ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ

Չորս անգամ Եւրոպայի ախոյեան եւ աշխարհի ախոյեանութեան 4 անգամ պրոնզէ մետալակիր Արսէն Յարութիւնեան նուաճեց «Ռիլ Ամերիքըն Ֆրիսթայլ» (ՌԱՖ) լիկայի թեթեւագոյն կշիռի ախոյեանութեան գօտին:

Մայեմիի մէջ տեղի ունեցած «ՌԱՖ 13» մրցաշարքի գլխաւոր տիտղոսի մենամարտին, 26 տարեկան հայ ըմբիշը պարտութեան մատնեց ամերիկացի Օսթըն Տէ Սանթոն:

Առաջին ռաունտին 2-0 արդիւնքով յառաջանալէ ետք, Արսէն Յարութիւնեան կորսնցուց իր առաւելութիւնը, բայց 3-րդ եւ վճռական ռաունտին ան կրցաւ 6-3 արդիւնքով յաղթել եւ դառնալ ախոյեան:

Շար.ը՝ էջ 12



ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԷՆ ՀՈՉԱԿԱԳԻՐ, ԱՊԱ ԱՆԿԱԽՈՒԹԻՒՆ

Հայաստանի վերանկախացման թուականի՝ 21 սեպտեմբեր 1991-ի 35-ամեակն է այս տարի:

Խորհրդային Միութեան, որուն մաս կը կազմէր Հայաստանը, Համայնավար կուսակցութեան գլխաւոր քարտուղար Լեոնիտ Պրեժնեւի մահէն ետք (1982-ին), Համայնավար կուսակցութեան ղեկին անցան ծերացած եւ հսկայ երկիրը կառավարելու անկարող ղեկավարներ: 1985-ի մարտին Խորհրդային Միութեան կոմունիստական կուսակցութեան Կեդրոնական կոմիտէի գլխաւոր քարտուղար ընտրուեցաւ Միխայիլ Գորբաչովը: Երկիրը կը գտնուէր տնտեսական ու քաղաքական ծանր վիճակի մէջ: Ճգնաժամային վիճակէն դուրս գալու նպատակով, նոր գլխաւոր քարտուղարը փորձեց կատարել տնտեսական եւ քաղաքական բարեփոխումներ:

Համայնավար կուսակցութեան 27-րդ համագումարը (1986 թուական) որոշեց արմատապէս վերակառուցել երկրի տնտեսութիւնը, քննադատաբար վերանայիլ նախկին սխալները եւ... հասարակութեան մէջ մտցնել ժողովրդավարութեան տարրեր: Այս քաղաքականութիւնը յայտնի դարձաւ իբրեւ հրապարակայնութիւն եւ վերակառուցում:

Հրապարակայնութիւնը ջուրի երես հանեց անթելած ու մոռցուած կարծուած ազգամիջեան բազմաթիւ տազնապներ, որոնց առաջիններէն մէկը հանդիսացաւ Ղարաբաղեան պահանջատիրութիւնը: Սկըսած 1988 փետրուարին Արցախի ինքնավար մարզին մէջ, պահանջատիրութիւնը ոտքի հանեց Խորհրդային Հայաստանի եւ սփիւռքի ողջ հայութիւնը:

Առանց մտնելու մանրամասնութիւններու մէջ, արձանագրենք, որ ստեղծուած Ղարաբաղ կոմիտէն ծնունդ տուաւ Հայոց համազգային շարժման: ՀՀԸ-ի կողքին, սկսան սաղմնաւորուիլ գանազան խմբաւորումներ եւ հասարակական շարժումներ, որոնց կարգին արտասահմանի մէջ գործող հայկական կուսակցութիւնները՝ Հայ յեղափոխական դաշնակցութիւնը, Սոցիալ դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը եւ Ռամկավար ազատական կուսակցութիւնը:

Ազատ ընտրութիւնները արտօնուած ըլլալով, 20 մայիս 1990-ի Հայաստանի խորհրդային սոցիալիստական հանրապետութեան Գերագոյն խորհուրդի ընտրութիւններուն մասնակցեցան, Համայնավար կուսակցութեան կողքին ՀՀԸ-ն եւ այլազան խմբաւորումներ: Այս ընտրութիւններուն, որոնց մասնակցեցան նաեւ Ղարաբաղի Ինքնավար մարզի հայերը, ՀՀԸ-ն ապահովեց համեմատական մեծամասնութիւն (մեծագոյն թիւով խմբաւորում): Գերագոյն խորհուրդի նախագահ ընտրուեցաւ ՀՀԸ-ի ղեկավար Լեւոն Տէր Պետրոսեանը: Բազմաթիւ պատգամաւորներ անդամագրուեցան նորաստեղծ կուսակցութիւններու:

Բազմակուսակցական Հայաստանի Գերագոյն խորհուրդը իր առաջին նստաշրջանին ձեռնարկեց Հայաստանի անկախութեան գործընթացին: Երկարատեւ եւ բուռն վիճարկութիւններէ ետք, 23 օգոստոս 1990-ին Գերագոյն խորհուրդը որդեգրեց «Հռչակագիր Հայաստանի անկախութեան մասին» փաստաթուղթը, որով պաշտօնապէս յայտարարեց անկախութեան հռչակման մեկնարկը: Հռչակագիրը, որ երկիրը կը վերակոչէր «Հայաստանի Հանրապետութիւն» կամ պարզապէս Հայաստան, բաղկացած էր 12 կէտերէ: Հայաստանի եւ Ղարաբաղի վերամիացման պահանջը կը գտնեց նախաբանին մէջ, իսկ 11-րդ նախավերջին յօդուածը կ'ըսէ. «Հայաստանի Հանրապետութիւնը սատար է կանգնում 1915 թուականին Օսմանեան թուրքիայում եւ Արեւմտեան Հայաստանում Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման գործին»: Հռչակագիրը ամփոփ կերպով կը յիշատակէ «Չարգացնելով 1918 թուականի մայիսի 28-ին ստեղծուած անկախ Հայաստանի Հանրապետութեան ժողովրդավարական աւանդութիւնը», պետութեան ազգային, քաղաքական, տնտեսական, ընկերային ու պաշտպանական հիմնական սկզբունքները: Գերագոյն խորհուրդը որդեգրեց առաջին անկախութեան հիմնադր, եռագոյն դրօշը եւ զինանշանը:

Հայաստանի Գերագոյն խորհուրդի որոշումով, 21 սեպտեմբեր 1991-ին կազմակերպուեցաւ հանրաքուէ, Խորհրդային Միութեան կազմէն դուրս գալու եւ անկախանալու հարցով: Զուտարկութեան իրաւունք ունեցողներու 94,39 տոկոսը (2 միլիոն 43 հազար մարդ) այո՛ ըսաւ անկախութեան: Հանրաքուէի արդիւնքներու վերջնական հրապարակումէն ետք, 23 սեպտեմբեր 1991-ին Գերագոյն խորհուրդը Հայաստանը հռչակեց անկախ պետութիւն: Իբրեւ անկախութեան օր հռչակուեցաւ հանրաքուէի օրը՝ 21 սեպտեմբերը:

ՏԻԳՐԱՆ ԾԻՆՊԱՇԵԱՆ

Շար.ը՝ էջ 12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՆԿԱԽԱՅՄԱՆ 35-ԱՄԵԱԿԻՆ
ՆՈՒԻՐՈՒԱԾ ԹԻՒԸ ԿԸ ՀՈՎԱՆԱԻՈՐԵՆ
«ԱԶԳԱԿ»-Ի ՔԱՆԱՏԱՅԻ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՄԵԼԱՆՔԹՈՆ ԵՒ ՀԱՅԿ ԱՐՍԼԱՆԵԱՆ ՃԵՄԱՐԱՆԻ Ժ. ԴԱՍԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԱԳՆԱՑՈՒԹԻՒՆԸ

Յոյսի՝ Հայրենիք,
Լոյսի՝ Հայրենիք,
Հոգի՝ Հայրենիք:

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

10-էն 17 մայիս 2026-ին երկար տարիներէ ի վեր մտածուած ու ծրագրուած դէպի հայրենիք երազային ճամբորդութիւն մը իրականութիւն դարձաւ Համազգայինի Մելանքթոն եւ Հայկ Արսլանեան ճեմարանի Ժ. դասարանի աշակերտութեան համար:

Ծրագիրը կոչուեցաւ «Հայաստանագնացութիւն 2026», եւ այս ճամբորդութեամբ ճեմարանը եղաւ լիբանանահայ առաջին վարժարանը, որ իր հայեցի կրթութեան ծրագիրին մէջ ներառեց ամբողջ դասարանի մը հայաստանագնացութիւնը, աշակերտներուն մէջ առաւել եւս ամրապնդելով պահանջատէր հայու ոգին եւ հայրենիքի սէրը:

Թումանեանի «Յոյսի՝ հայրենիք, լոյսի՝ հայրենիք, հոգի՝ հայրենիք» կարգախօսով գինուած, ճեմարանի ջախը իրենց կուրծքերուն գետեղած եւ Արարատն ու Արցախը իրենց սրտերուն մէջ դրոշմած՝ ճեմարանի Ժ. դասարանի աշակերտները բարձր տրամադրութեամբ Հայաստան հասան Կիրակի, 10 մայիս 2016-ին: Մայիսեան այս դաստիարակչական ճամբորդութիւնը սկիզբ առաւ Երեւանէն եւ Մայր Հայաստանի բարձունքէն, ուրկէ աշակերտները շնորհաւորեցին իրենց եւ բոլոր հայ մայրերու տօնը:

Յաջորդող եօթը օրերուն մեր պապերուն յաղթանակի դօղանքը ճեմարանականներու շրթներով վերստին թնդաց Սարգստապատէն, «Հայր Մեր»-ը արտասանուեցաւ հաւատքի ամրոց Սուրբ Էջմիածինէն, Խոր Վիրապէն եւ Սիւնեաց աշխարհի սիրտէն՝ Տաթևի վանքէն:

Աշակերտները այցելեցին՝ Մետրոպ Մաշտոցի գերեզման՝ Օշական գիւղ, Արագածի լանջերուն գտնուող տառերու պուրակ, Սեւանայ լիճ ու Սեւանավանք, Գառնիի հեթանոսական տաճար, Գեղարդի վանք, Հարսնաձորի դիտակէտ, Պարոյր Սեւակի թանգարան եւ շարք մը տեսարժան վայրեր, իւրաքանչիւր քայլափոխի՝ աւելի խանդավառ, աւելի հպարտ եւ աւելի պահանջատէր:

Ծիծեռնակաբերդի եւ Ցեղասպանութեան թանգարանի այցը դաստիարակչական այս ծրագիրին մէջ իր յատուկ դրոշմը



դրաւ. հոն աշակերտները իրենց յարգանքի տուրքը մատուցեցին մեր սուրբ նահատակներուն: Նոյն օրը անոնք իրենց յարգանքի տուրքը մատուցեցին նաեւ Շաքարլուի մէջ հանգչող մեր



հերոսներուն, եւ ճեմարանաւարտ արցախեան հերոս Նահապետի Վիգէն Չաքարեանի շիրիմը ջերմացաւ իր հարազատ կըրթօճախի աշակերտներուն շունչով:

Հայաստանագնացութիւնը ամբողջացաւ ԹՈՒՄՕ արհեստագիտական կեդրոն եւ Երեւանի պետական համալսարան այցելութեամբ, ճեմարանաւարտ խաչքարագործուհի Նարինէ Փոլատեանի հետ խաչքարագործութեան աշխատանոցով, ինչպէս նաեւ՝ Երեւանի մէջ կազմակերպուած ճեմարանականներու հաւաքով:

Այսօր՝ 21 սեպտեմբեր 2026-ին, Հայաստանի անկախութեան տօնին առիթով այս քանի մը տողերով ներկայացուցինք «Հայաստանագնացութիւն 2026»-ը՝ իբրեւ ճեմարանականներ վերանորոգելու մեր ուխտը, բարձր պահելու հայ լեզուն, հայոց պատմութիւնը, հայ արժեքները եւ հայ մշակոյթը:

Հայաստանագնացութեան մասին աշակերտներուն խօսքերն.

- «Այս ճամբորդութիւնը պարզ ուղեւորութիւն մը չէր: Ան դարձաւ յիշատակներով, ժպիտներով, ուրախ պահերով եւ հայրենիքի սիրով լեցուն փորձառութիւն մը»:
- «Այս ճամբորդութիւնը ակնկալուածէն աւելի ազդեցիկ էր ինծի համար: Ան իմ մէջս ամրապնդեց հայրենասիրութեան եւ ընկերասիրութեան բարձր զգացումները»:
- «Վերջապէս մեր աչքերով տեսանք այն, ինչի մասին տարիներով լսած ու կարդացած էինք ճեմարանի պատերէն ներս...»:
- Եւ ճեմարանականներու հոգիներուն մէջ վառ կը մնայ Շանթէն, Աղբալեանէն ու Վրացեանէն փոխանցուած հայրենասիրութեան ոգին...
- «Ճեմարանական ոգի՝ յանուն հայրենիքի»:

ՀԱՅԱՍՏԱՆԱԳՆԱՑՆԵՐ



from **CONCEPTS** to **REALITY**

YOUR PARTNER IN SUCCESS, PROVIDING HOSPITALITY EQUIPMENT THAT COMBINES QUALITY AND PERFORMANCE - FROM RESTAURANTS, BAKERIES, AND PASTRY SHOPS TO HOTELS, HOSPITALS, SUPERMARKETS, AND MORE...

04 712 300
www.vresso.com

Ի ԶՈՒՐ ԿԸ ՀՆՉԵՆ ԱՐԵՒԵԼՈՒՄՆԵՐ, ԵԹԷ ԱԶԳԸ ՊԱՏՐԱՍՏ ԶԷ ԶԱՆՈՐՔ ԸՆԿԱԼԵԼՈՒ

(ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ 35-ԱՄԵԱԿ)

«Մեր հողը մեր պատիւն է: Եթե ոեւէ մէկը հնարաւոր է համարում պատուի մի մասը թշնամուն յանձնել, ապա դա ընդամենը վկայում է տուեալ անձի պիղծ տեսակի մասին...»

ՍԱՍՈՒԷԼ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
(Պատմաբան, յուշարձանագետ)

Ինչպէս որ քաղաքական կեանքի մէջ դարձողարձիկ ու ստապատիր խօսքերը շահարկումի առաջնորդող արտայայտութիւններ են, որոնց վարժ են ժողովուրդներ, ազգեր, նոյնպէս, ըստ երեւոյթին, յարափոփոխ կեանքի թաւալքին զուգահեռ, ազգային արժեքներ՝ հող, հայրենիք, արժանապատուութիւն, անցեալ, ժառանգութիւն եւ այլն, սկսած են տակաւ պարպուիլ իրենց իսկական բովանդակութենէ, իմաստէն, ու այսպէս, դարձած են առեւտուրի թէ ժամանցի առարկաներ:

Ի դէպ, ցաւով ու խոր մտահոգութեամբ կ'արձանագրենք «առարկաներ» բառը, պարզապէս որովհետեւ 21-րդ դարը թէւէ իրեն հետ բերաւ հզօր արհեստագիտութիւն, անկասելի արդիականութիւն, զարգացումի եւ յառաջդիմութեան ուղիներ, միւս կողմէ՝ ամբողջ մարդկութիւնը ակնատես է, կ'ապրի, ծայրայեղ նիւթականացումի բորբ վիճակներ՝ պատճառ դառնալով մարդկային կերպարի՝ միտքի, տրամաբանութեան, խիղճի, զգացումի եւ մարդավայել ապրելակերպի անկումին:

Տեղին է ընդգծել, որ քաղաքական գիտութեանց բառապաշարին մէջ նման վիճակներ բնութագրուած են մէկ բառով՝ գործնապաշտութիւն եզրով, Մաքիաւելիի օրերէն ասոյիս, բայց մանաւանդ՝ վերջին երկու հարիւր տարուան ընթացքին, երբ մեծ պետութիւններ, սրելով իրենց անյագուրդ իշխանատեսիք, փառամոլի եւ աւագակի վարքագիծը, ամէն վայրագ միջոցի կը դիմեն ստրկացնելու եւ սնանկացնելու գտնելու, ժողովուրդներ ու պետութիւններ, առաւելագոյնս շահարկելու անոնց մարդուժը, այս կամ այն բնական հարստութիւնը, յայտնապէս փնտցնելէ ետք տուեալ ժողովուրդին ազգային արժեքները, հաւաքական ընկալումներն ու ապագայակերտի երազները:

21 սեպտեմբեր 1991:

Օրին մեր ժողովուրդը, ձեւով մը անտեսելով աշխարհաքաղաքական բարդ եւ հակոտնեայ վերիվայրումները, ճիշդ կողմնորոշուելով քուէարկեց, ինքզինք փաստեց, սեփական կամքը պարտադրեց եւ նետուեցաւ պետականաշինութեան գուպարին մէջ:

Ազգը բուէարկեց՝ յանուն անկախութեան, գերիշխանութեան եւ ազատ ապրելու բացարձակ իրաւունքին:

Թեւէ այդքան ալ դիւրին ընթացող քաղաքական **աքթ** մը չէր ընտրութիւնը, բայց եւ այնպէս, հորիզոնային Միութեան փլուզումով՝ այլ ելք չունէին բաղկացուցիչ տարբեր երկիրներ, եթէ ոչ՝ անկախանալ եւ տեր կանգնիլ իրենց սեփական ճակատագրին:

Հայրենի ժողովուրդը, իր կարգին, յաջողեցաւ Արցախի գոյամարտին առջնթեր, տեր կանգնիլ իր հողին, ինքնութեան, տեսակին ու ժառանգութեան:

Այդուհանդերձ, նման քաղաքական արարք չունեցաւ վառ կենսունակութիւն:

Փաստօրէն իրերայաջորդ հայրենի իշխանութիւններ, որոնք ստանձնեցին հայ պետականութեան ղեկավարութիւնը, չկրցան արմատախիլ ընել խորհրդային օրերու վարքագիծները, ինչպէս նաեւ՝ լծուելու իրաւ ժողովրդավար կարգերու հաստատումին, ժողովուրդի կենսամակարդակի առաւել բարելաւումին, հայրենիքի վերաշինութեան աշխատանքին, տնտեսութեան տակաւ բարգաւաճումին, սերունդներու հոգեմտաւոր դաստիարակութեան եւ այլն:

Աւելին. հայ պետական կարգն ու սարքը չկրցաւ արմատախիլ ընել նորովի բուսած աւատապետութիւնը, չորդեգրեց քաղաքական մտքի ու դիւանագիտական աշխատանքներու յուսադրիչ, կենարար ու արդի գործընթացներ:

Իսկ հայկական բանակը արդիական գիւտածով եւ հմտութեամբ օժտելու ամէն փորձ իր սաղմին մէջ մարեցաւ, որովհետեւ ռազմական արհեստագիտութիւնը մնաց սահմանափակ տարողութեամբ ու կախեալ օտարի՝ Ռուսիոյ քմահաճոյքէն:

Ամենաողբերգականը եղաւ այն, որ հայրենի իրերայաջորդ իշխանութիւններ՝ գիւտընթաց Արցախի յաղթանակով, չկրցան ձերբազատիլ լայն-թալանի փորձութենէն, իշխանատեսիքի աներիչ ու քանդիչ ախորժակէն, հազան մեծամիտի եւ ինքնագոհի հանդերձանք, իսկ յոյսը դնելով օտարի ռազմավարական գործընկերութեան վրայ՝ մոռացութեան տուին ամուր հիմքի վրայ պետութիւն կառուցելու խոստումները:

Ասոնք պատճառ դարձան՝ արտագաղթի, յուսալքութեան, հիասթափութեան, ինքնաքանդումի եւ պետականութեան տկարացումին:



Ըսուածին ապացոյցը ներկայ օրերու հայրենիքի տխուր իրավիճակն է, արիւնով ազատագրուած ու պաշտպանուած Արցախի կորուստը, յանձնումը, Հայաստանի տարածքին դէմ թշնամի ուժերու նկրտումներն են, այլապէս յարձակողապաշտ քաղաքականութեան եւ ճնշումի միջոցներն են՝ իր դաւաւոր եւութենէն պարպելու հայրենի ժողովուրդը, միանգամընդմիջտ ջնջելու հայու երազանքը, ազատ ապրելու իրաւունքը, ինչպէս նաեւ՝ պարտադրելու տնտեսական կախեալութիւն եւ արհեստական շնչառութիւն:

Իսկ ամէնէն դատապարտելին, զգուշելին այսօր այն է, թէ որոշումի կեդրոններ կ'ուզեն, տիւ եւ գիշեր կը փորձեն ուղղակի միջամտութիւններով իրենց քաղաքական կամքն ու վարքագիծը օգտագործել՝ աքցանի մէջ պահելու հայ քաղաքական միտքը, ազգային մտածողութիւնը եւ գերիշխան ապրելու արդար պահանջները:

Իրօք, զարմանալի ոչինչ պէտք է տեսնել աշխարհակալ ուժերու նմանատիպ վարքագիծներու մէջ, որովհետեւ անոնց պետական շահերը անելի գերիշխող են, քան՝ փոքր ժողովուրդներու ու պետութիւններու խաղաղ կեանքը, անդորրութիւնը:

Այդուհանդերձ, 22մեցնող իրականութիւնը այն է, որ հայ քաղաքական միտքը իր պետական կարգ ու սարքով, յատկապէս՝ վերանկախացած Հայաստանի 35 տարիներուն, չկրցաւ, չուզեց ըմբռնել վերելի ճշմարտութիւնը:

Այո՛, ճշմարտութիւն, թէ չկան դրացի ու բարեացակամ պետութիւններ, այլ՝ ազգային շահեր հետապնդող քաղաքատնտեսական գործընթացներ, փոխշահաւետ յարաբերութիւններ ու մանաւանդ ռազմավարական հիմքերու վրայ պատրաստուած հեռակայ մուրթ թէ բացայայտ ծրագիրներ:

Ծրագիրներ, որոնք շատ անգամ անհասանելի են մեզի համար, վատ են իրենց պարունակած բովանդակութեամբ, անըմբռնելի են մեր մտքի հասունութեան, դժուար ընկալելի հայ պետականութեան, որովհետեւ վերանկախացած հայրենիքի պետական ուժեր ամբողջ 35 տարի առաջնորդուեցան լայն թալանով, սեփական կեանքի համար աւարներու ուղիներ որոնելով, փոխանակ օգտուելու սեփական պատմութենէն ու արդի ժողովուրդներու փորձառութենէն եւ քաղաքական հմտութենէն:

Միւս կողմէ՝ վրայ հասաւ 2018-ի իշխանափոխութիւնը, որ շա՛տ շատերու համար եղաւ, այսպէս ըսած, փրկութեան լաստ, դէպի ժողովրդավարութիւն տանող ճանապարհ ու ազգային տենչերու իրականացման հարթակ:

Ու ժամանակի թաւալքին հետ լոյսին եկաւ իրականութեան միւս երեսը, երբ յակնէ անուանէ բացայայտուեցան՝ իշխանական համակարգին տոր դէմքերը, անոնց թաքուն թէ բացայայտ քաղաքական ծրագիրներն ու արելու մի «շնորհ»-ները:

Վերջին տարիներու հայրենի քաղաքական կեանքի թաւալքը դէմ յանդիման գտնուեցաւ ահաւոր տագնապներու եւ փորձութիւններու: Ու հասանք այս վիճակին:

Հայրենի ժողովուրդը բուէարկեց ու դարձեալ արձակեց իր լճիւղը:

Արդ, ի՞նչ բանի կը ծառայեն այս կամ այն կողմի քաղաքա-

կան-գաղափարական վերլուծումները, պահանջներն ու ակընկալութիւնները, երբ ժողովուրդը ինք կ'ապրի գոհունակութեամբ լիացած կեանք մը՝ ի տես տնտեսական վերելքի, զբօսաշրջային կեանքի աշխուժութեան, շինարարական աշխատանքի լայնածաւալ տարողութեան, ամսականներու բարելաւման ու հասարակութեան բարեյաջող ընթացքին:

Այս հաստատումները կը պատկանին վերջերս Հայաստան այցելութիւն տուած ոչ նիկոլասեր հայորդիներու, որոնց վկայութիւնը թէւէ կ'ուրախացնէ մեզ, բայց միւս կողմէ՝ բազում հարցադրումներու տեղիք կու տայ:

Հայ լրագրութիւնը՝ ի Հայաստան եւ սփիւռս աշխարհի, որքան ալ փորձէ իրազեկ պահել հայրենի հայութիւնը առկայ սպառնալիքներու թէ գալիք վտանգներու մասին, ազգային ու պետական մակարդակի որդեգրուած արելու մտքերը ի գուր կը հնչեն, եթէ երբեք ամբողջ հայութիւնը ցարդ չէ կրցած ճշդորոշել իր տեղն ու դերը քաղաքակիրթ աշխարհի հարթակին վրայ՝ միշտ հաւատարիմ մնալով իր պատմութեան, ժառանգին անցեալի թէ ներկայի նուաճումներուն:

Ճիշդ է, որ իշխանութիւններ գնայուն են, հայրենիքն է մայուն, այսուհանդերձ, իւրաքանչիւր հայու իրաւունքն է հարցադրել՝ ինչո՞ւ կոտորակուած հայրենիք մը ունիւք, ինչո՞ւ պառակտուած է հայութիւնը, ինչո՞ւ միասնականութեան թեման սոսկ լոզունգի վերածուած է, ինչո՞ւ այսքան սուղ պիտի արժէ խաղաղութիւնը, հայ ազգն ու պետականութիւնը ե՞րբ պիտի զգաստանան, արթնան իրենց թմբիկէն եւ լծուին ոչ թէ լոկ «իրական» Հայաստան մը ունենալու, այլ՝ հայաբոյր Հայաստան մը, որ պիտի պարփակէ՝ ազգին ներուժը, հարստութիւնը, ժողովրդագրական պատկերը, թշնամի ուժերու դէմ կանգնելու հզօրութիւնը, ինքնիշխան ու ազատ ապրելու կամքը:

Այո՛, հայաշունչ Հայաստան մը, ուր գոյութիւն չունին խնդրականութիւն, ատելութիւն եւ իրերամերժ պահուածք: Հայաստան մը, որուն վայել է Եռաբլուրի շունչը, պատգամը, ուր կը թեւածեն Արամազդի, Անահիտի եւ Վահագնի հրաշափառ ու յաւերժական հոգիները, ազատատեսիչ ու պայքարի ոգին: Արարատի վեհութեամբ ապրող Հայաստան մը, որ տէր է իր ինքնութեան, գերծ՝ խայտառակ եւ ամօթալի կեցուածքներէ, թշնամիին դիմաց ծնկած ըլլալէ, ու մանաւանդ՝ մարդկութեան գութն ու ողորմութիւնը աղերսելէ:

Ազգային գաղափարախօսութեամբ շէշող Հայաստան մըն է ազգին երազածը, որ կարենայ համախմբել ամբողջ հայութիւնը իր հովանիի տակ, դառնայ օրրանը մեր ապրումներուն, յոյզերուն եւ հետագայ յաղթանակներուն:

Ըլլայ առաջնորդը, մղիչ ուժն ու կորովը նորահաս սերունդներու, որոնք պահ մը ձանձրացած իրենց սփիւռքացած կեանքէն, վերադառնան հայրենիք, ապրին, աշխատին, ստեղծագործեն ու շաղախուին Հայաստանի սուրբ հողին հետ:

Հզօր Հայաստան մը, որուն արելու մասին թըշնամի թէ բարեկամ ուժեր եւ պատիւ ներշնչէ ամբողջ հայութեան:

ՀԱՍՏԻԿ ԳԻՆԸԵԱՆ



LES FILS DE

hadidian

FRERES

BIJOUTIER

 www.hadidian.com
  hadidianofficial
  Hadidian



Jack Gifts

ACCESSORIES

The perfect

Gift shop

for all ages!

📍 Bourj Hammoud Municipality square

☎ 01264200 70606992

🌐 www.jackgiftsonline.com

Follow us:





ՀՕՄԻ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹԵԱՄԲ՝ ԱՐՑԱՆԻ ԳԱՂԹԱԿԱՆ ՀԱՅ ԿԻՆԵՐՈՒՆ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՅԸ ՊԻՏԻ ՆԵՐԿԱՅԱՅՈՒԻ ՄԱԿԻ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԻՐԱՒԱՆՑ ԽՈՐՀՈՒՐԴԻ 63-ՐԴ ՆԱՏԱՇՐՁԱՆԻ

Հայ օգնության միությունը (ՀՕՄ), որ ՄԱԿ-ի Տնտեսական և ընկերային յանձնաժողովին (ECOSOC) մեջ խորհրդատուական կարգավիճակ ունեցող ոչ կառավարական կազմակերպություն մըն է, Հայկական իրաւական կեդրոնին (ALC) հետ համագործակցաբար, ՄԱԿ-ի Մարդկային իրաւանց խորհուրդի 63-րդ նստաշրջանի ծիրին մեջ պիտի կազմակերպէ ձեռնարկ մը, որուն կիզակետն է գաղթականներու արդարութիւնը և Արցախէն բռնի տեղահանուած հայ բնակչութեան՝ իրաւունքներու վրայ հիմնուած մնայուն լուծման ապահովումը:

«Տեղահանուածներու արդարութիւն» Արցախի հայ կիներու և մանուկներուն. վերադարձի իրաւունքի յառաջդրում՝ մարդկային իրաւունքներու, կալուածներու վերականգնման, մշակութային ժառանգութեան պահպանման և կայուն վերականգնումի միջոցով» խորագիրը կրող նախաձեռնութիւնը տեղի պիտի ունենայ 24 սեպտեմբեր 2026-ին, ժամը 17:00-ին, Ժընեւի Ազգերու պալատին (Palais des Nations) XI սրահին մէջ:

Ըննարկումը լուսարձակի տակ պիտի առնէ մարդասիրական և մարդկային իրաւանց շարունակուող հետեւանքները, որոնց ենթարկուած են 2023-ին Արցախէն բռնի տեղահան եղած աւելի քան 100.000 բնիկ հայեր՝ առանձնապաւտուկ ուշադրութիւն դարձնելով կիներու և մանուկներու փորձառութիւններուն ու իրաւունքներուն:

Ըննարկման հիմնական ուղղութիւնները պիտի ըլլան՝ տեղահանուած անձերու պաշտպանութիւնը և բնակարանային, առողջապահութեան, կրթութեան, աշխատանքի ու

ընկերային ծառայութիւններու ապահովումը, կամաւոր, ապահով, արժանապատիւ և կայուն վերադարձի սկզբունքները, բնակարանային, հողային և կալուածային իրաւունքներու վերականգնումը, մշակութային և կրօնական ժառանգութեան պաշտպանութիւնը, հաշուետուողականութիւնը, անցումային արդարադատութիւնը և չլրկնուելու երաշխիքները:

Ձեռնարկը պիտի մեկտեղէ՝ տուեալ մարմինին անդամ պետութիւններու ներկայացուցիչներ, միջազգային իրաւական և մարդկային իրաւանց մասնագետներ, մարդասիրական ոլորտի գործիչներ, քաղաքացիական հասարակութեան ներկայացուցիչներ և այլ շահագրգիռ կողմեր՝ քաջալերելու համար երկխօսութիւնը և յառաջ տանելու արդարութեան, վերականգնումի ու մնայուն լուծումներու գործնական, մարդկային իրաւունքներու վրայ հիմնուած մօտեցումները:



ԿԱՐՊԻՍ ՔԵՆՏԻՐՈՒՆԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ ԲԱՑՈՒՄ



Մուսա Լեւան հերոսամարտի 111-ամեակի և Այնճարի հիմնադրութեան 87-րդ ամեակի առիթներով, կազմակերպութեամբ Համազգայինի Այնճարի «Պ. Սեւակ» մասնաճիւղի վարչութեան, հինգշաբթի, 17 սեպտեմբեր 2026-ին երեկոյեան ժամը 7:00-ին Ս. Պօղոս եկեղեցւոյ «Գ. Կիւլպենկեան» սրահին մէջ տեղի ունեցաւ գիւղի արուեստագետներէն Կարպիս Զենտիօրեանի անհատական ցուցահանդէսի բացումը:

Բացման խօսքը արտասանեց Կարինէ Շաննագեան, որ ծանօթացուց օրուան արուեստագետը՝ իբրեւ գիւղի զաւակ և մարդկային արժեքներու տէր անձ: Ապա «Օրինանք»-ի աղօթքէն մը ետք, Եզեկիէլ վրդ. Սեւումեանի կողմէ, հրաւիրուեցան բոլոր ներկայ հոգեւոր հայրերը, Այնճարի քաղաքապետը, ՀՀԴ «Կարմիր Լեռ» կոմիտէի ներկայացուցիչը և Համազգայինի վարչութեան ատենապետը՝ կատարելու բացումը:

Ներկաները զմայլանքով անցան սրահին մէջ զետեղուած արուեստի գործերուն դիմացէն և հոգեպէս յագեցած դուրս եկան:



المطعم
الششمس
— AL SHAMS —


Since RESTAURANT 1975

ANJAR 08/620567 08/621800 81/620800
www.shamsrestaurant.com



FAROUJ
الششمس

Anjar 08/620770 81/620770
Zahle 08/825525 70/442524
Chtaura 08/544590 71/888203
Bourj Hamoud 01/240303 70/210000
www.faroujalshams.com



ՌԻՐ ԵՆՔ ՄԵՆՔ

ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ 36-ԱՄԵԱԿԻ ՇԵՄԻՆ՝ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵԾ ՀԱՐՑՈՒՄԸ

21 սեպտեմբեր 2026-ին Հայաստանի Հանրապետությունը պիտի ամբողջացնէ իր վերանկախացած պետականության երեսունհինգ տարին եւ պիտի թելակոխէ երեսունվեցերորդը:

Երեսունհինգ տարի: Ժողովուրդի մը պատմության մէջ՝ ակնթարթ: Պետություն կառուցելու համար՝ բաւական երկար ժամանակ, որպէսզի արդէն կարելի ըլլայ ոչ միայն հպարտանալ ձեռքբերումներով, այլ նաեւ՝ անխնայօրէն հաշարկել կորուստները, սխալները, ձախողումները եւ ջգտագործուած կարելիութիւնները:

Ու այսօր՝ անկախության հերթական տարեդարձին ընդամաք, մեզի պէտք է ոչ այնքան տոնական ճառ, որքան՝ համազգային մեծ ինքնաքննութիւն:

Ո՛րք էինք 1991-ին: Ո՛րք ենք այսօր: Եւ մանաւանդ՝ ո՛րք պիտի ըլլանք վաղը, եթէ ներկայ ընթացքը շարունակուի:

Հայաստանը այսօր յայտնուած է՝ ռուս-ամերիկեան մրցակցութեան, Եւրոպական Միութեան ու Եւրասիական տնտեսական համակարգին միջեւ ընտրութեան, թուրք-ազրպէյճանական ռազմավարական ծրագիրներու, ամերիկեան ներկայութեան եւ իրանեան անվտանգային մտահոգութիւններու գրեթէ մէկտեղուած խաչմէրուկին վրայ:

Այս բոլորը տեղի կ'ունենան փոքր տարածք ունեցող, սահմանափակ մարդկային ու տնտեսական ներուժով երկրի մը շուրջ: Ու այդ երկիրը մեր հայրենիքն է:

Մեծ պետութիւնները Հարաւային Կովկասը կը դիտեն քարտէսի վրայ: Մենք այդ քարտէսին վրայ կ'ապրինք: Անոնց համար այստեղ գոյութիւն ունին՝ ճանապարհներ, երկաթուղիներ, կազատարներ, ուժանիւթի հաղորդակցութիւններ, շուկաներ, ազդեցութեան գոտիներ եւ ռազմավարական դիրքեր: Մեզի համար՝ հայրենի տուն, հող, սահման, ժողովուրդ, պատմութիւն եւ պետականութիւն:

Այս տարբերութիւնը հասկնալը պետական մտածողութեան առաջին պայմանն է:

Երբ ուրիշ պետութիւն մը

կը խօսի Հայաստանի սահմանադրութեան մասին

Ազրպէյճանը անկարկներով չի խօսիր այլեւս: Պաքուի բարձրաստիճան պաշտօնատարներ բարձրաձայն կը խայտառակեն մեզ, Հայաստանի սահմանադրութեան մէջ իրենց կողմէ տարածքային պահանջ նկատող դրոյթի վերացումը անհրաժեշտ պայման կը համարեն խաղաղութեան համաձայնագրի վերջնական ստորագրութեան համար:

Վարդիւն է երկար իրաւական բանավեճ ունենալ:

Սակայն իիմական հարցը իրաւագիտական սահմաններէն անդին կ'անցնի: Այդ ե՛րբ օտար պետութեան մը ղեկավարութիւնը սկսաւ որոշել՝ ի՞նչ պէտք է մնայ եւ ի՞նչ պէտք է փոխել Հայաստանի Հանրապետութեան սահմանադրութեան մէջ:

Եթէ Հայաստանը սեփական ներքին քննարկումներու, պետական բարեփոխումներու եւ ժողովուրդին կամքով որոշէ Նոր սահմանադրութիւն ունենալ, այդ մէկը Հայաստանի քաղաքացիներուն իրաւունքն է: Բայց երբ Նոյն փոփոխութիւնը կը յայտնուի արտաքին պահանջի կողքին, իրավիճակը բոլորովին ուրիշ իմաստ կը ստանայ: Խնդիրը Նոյնիսկ այն չէ, թէ վաղուան սահմանադրութեան մէջ ո՛ր նախադասութիւնը պիտի մնայ կամ պիտի վերանայ:

Խնդիրը նախադէպն է:

Այսօր՝ սահմանադրութիւնը:

Վաղը՝ պատմական փաստաթուղթ մը:

Միւս օրը՝ պետական խորհրդակնիշ մը:

Ապա՝ արտաքին քաղաքական որոշում մը:

Պետութիւնները երբեմն համաձայնութիւններ կը կնքեն եւ փոխգիշերներ կը կատարեն: Սակայն պետական ինքնիշխանութիւնը կը սկսի հոն, ուր ժողովուրդ մը կը կարողանայ ինքնուրոյն որոշել իր հիմնարար օրէնքին բովանդակութիւնը:

Թուրքիա, իր կարգին, կը շարունակէ Հայաստանի հետ կարգաւորման գործընթացը ներկայացնել տարածաշրջանային ընդհանուր խաղաղութեան եւ Ազրպէյճանի հետ գործընթացներուն զուգահեռ ընթացող քաղաքականութեան մը մէջ եւ իրապարակաւ կը շեշտէ իր աջակցութիւնը «եղբայրական Ազրպէյճանի» խաղաղութեան ջանքերուն:

Հետեւաբար Երեւանը պարտաւոր է գիտնալ ոչ միայն այն, թէ այսօր ի՞նչ փաստաթուղթ պիտի ստորագրէ, այլ նաեւ՝ ի՞նչ քաղաքական տրամաբանութիւն կրնայ ամրագրել այդ ստորագրութեամբ:

Միւս կողմէ՝ 2025-ին ընդունուած օրէնք մը արձանագրեց ԵՄ անդամակցութեան գործընթաց սկսելու քաղաքական ձեգտումը, իսկ 4-5 մայիս 2026-ին Երեւանի մէջ գումարուեցաւ Հայաստան-ԵՄ առաջին գագաթաժողովը: Եւրոպական Միութիւնը բացառապէս կը խօսի Հայաստանը իրեն աւելի մօտեցնելու եւ ոլորտային համարկումը խորացնելու մասին:

Հայաստան միաժամանակ կը շարունակէ մնալ ԵԱՏՄ-ի անդամ:

Մոսկուան ալ աւելի յստակ դարձուցած է իր տեսակէտը՝ ԵՄ անդամակցութեան ճանապարհը եւ ԵԱՏՄ անդամակցութիւնը վերջնական հանգրուանին անհամատեղելի համարելով: Ռուսիա նաեւ վերջին ամիսներուն տնտեսական ճնշման միջոցներ կիրարկած է հայկական որոշ արտածումներու նկատմամբ:

Հարցը դարձեալ Եւրոպայի կամ Ռուսիոյ նկատմամբ սիրող կամ հակակրօնքի հարց չէ:

Պետական քաղաքականութիւնը չի կառուցուիր զգացական նախընտրութեամբ:

Ժողովուրդը իրաւունք ունի իմանալու

Եթէ Հայաստանը կը շարժի դէպի Եւրոպական Միութիւն,



ի՞նչ ժամանակացոյցով: Ի՞նչ տնտեսական անցումային ծրագիրով: Ի՞նչ պիտի պատահի ռուսական շուկային, ուժանիւթային կախուածութեան, դրամական փոխանցումներուն եւ առեւտուրին: Ի՞նչ անվտանգային համակարգ պիտի փոխարինէ նախկինը:

Իսկ եթէ Հայաստանը կը շարունակէ ԵԱՏՄ-ի մէջ մնալ, ապա ԵՄ անդամակցութեան քաղաքական խոստումը ինչպէ՞ս պիտի իրականանայ:

Արտաքին քաղաքական բազմակողմանիութիւնը կարողութիւն կը դառնայ միայն այն ժամանակ, երբ պետութիւնը գիտէ իր վերջնական նպատակը: Հակառակ պարագային, ան կրնայ վերածուիլ տարբեր ուժերու միջեւ քաշքշուքի:

ԹՐԻՓՓ - ճանապարհի մը, որուն շուրջ շատ աւելի մեծ հարցեր կան

Այս բոլոր զարգացումներուն մէջ ԹՐԻՓՓ-ը՝ «Թրամփի ուղի» յանուն միջազգային խաղաղութեան եւ բարգաւաճման» ծրագիրը, առանձնապատուկ ուշադրութեան արժանի է:

Այսօր արդէն բաւական ընդարձակ տեղեկութիւն հրապարակուած է անոր մասին:

Հայաստան-Միացեալ Նահանգներ համաձայնագիրով նախատեսուած «TRIPP Development Company»-ին մէջ ամերիկեան կողմը պիտի ունենայ 74 առ հարիւր համեմատութեամբ վերահսկիչ բաժնեմաս, Հայաստանը՝ 26%:

Ընկերութեան պիտի տրամադրուին համապատասխան տարածքներու նկատմամբ 49 տարուան հողային օգտագործման ու զարգացման բացառիկ իրաւունքներ, որոնք 50 տարի կարելի պիտի ըլլայ երկարաձգել՝ փոխադարձ համաձայնութեամբ: Ծրագիրը կրնայ ընդգրկել՝ երկաթուղի, ճանապարհ, քարիւղի եւ կազի խողովակաշարեր, էլեկտրական հաղորդակցութիւն ու **օպտիկամանրաթելային** ենթակառուցուածքներ: Համաձայնագիրը միաժամանակ յստակօրէն կը հաստատէ Հայաստանի ինքնիշխանութիւնը, տարածքային ամբողջականութիւնը եւ իրաւագորութիւնը ծրագրի ամբողջ տարածքին վրայ:

Փաստաթուղթը ինքնին «միջանցք» բառը չի հաստատեր եւ Հայաստանի իրաւագորութեան վերացումը չի նախատեսեր:

Բայց պետական լուրջ մտածողութիւնը այստեղ չի կրնար վերջանալ: Ընդհակառակը, այստեղէն կը սկսին հարցումները. Ինչո՞ւ 74 առ հարիւր:

Ինչո՞ւ 49 տարի:

Ինչո՞ւ հնարաւոր եւս 50 տարի:

Ի՞նչ պիտի ըլլան Հայաստանի տնտեսական իսկական եկամուտները:

Ո՞վ պիտի կառավարէ ենթակառուցուածքներու առօրեայ գործունեութիւնը:

Ինչպիսի՞ ապահովական համակարգ պիտի գործէ:

Ինչպէ՞ս պիտի լուծուին ապագայ քաղաքական վեճերը:

Ի՞նչ պիտի պատահի, եթէ յիսուն տարի ետք Միացեալ Նահանգներու, Իրանի, Ռուսիոյ, Թուրքիոյ կամ Չինաստանի տարածաշրջանային յարաբերութիւնները բոլորովին տարբեր պատկեր ունենան:

99 տարուան հնարաւոր հորիզոն ունեցող ծրագիր մը կարելի չէ գնահատել միայն 2026-ի քաղաքական պայմաններով:

Իրանի սահմանին վրայ ամերիկեան երկարատեւ ներկայութիւնը

Եւ այստեղ կը հասնինք հարցի այն բաժինին, որ Հայաստանի մէջ անհրաժեշտ խորութեամբ գրեթէ չի քննարկուիր:

ԹՐԻՓՓ-ի ենթակառուցուածքը պիտի անցնի Հայաստանի հարաւէն՝ Արաքսի հովիտէն, Իրանի անմիջական սահմանին երկայնքով: Հայաստանի վարչապետը օգոստոս 2026-ին Ազգային ժողովին մէջ հաստատած է, որ ԹՐԻՓՓ-ի երկաթուղային ենթակառուցուածքը պիտի անցնի Նոնաձոր-Ազարակ ուղղութեամբ՝ Հայաստանի հարաւային սահմանին, Արաքսի ափերով: Միաժամանակ ան ընդգծած է, որ ծրագիրը օտար զինուորական կամ զինեալ ներկայութիւն չի նախատեսեր:

Այս կէտը պէտք է յստակ պահել:

Այսօր ստորագրուած փաստաթուղթերը ամերիկեան բանակի տեղակայում չեն նախատեսեր:

Սակայն քաղաքական ու ռազմավարական մտածողութիւնը պարտաւոր է նաեւ յաջորդ հարցումը տալ:

Երբ Միացեալ Նահանգներու պատկանող կառոյցը վերահսկիչ մասնակցութեամբ տասնամեակներ շարունակ ներկայութիւն պիտի ունենայ Իրանի անմիջական սահմանին վրայ, կարելի՞ է ապահովաբար յայտարարել, որ այդ ներկայութիւնը ապագային երբեք անվտանգային, հետախուզական

կամ ռազմական նշանակութիւն պիտի չստանայ:

Ոչ ոք այսօր կրնայ այդպիսի ապագայ երաշխաւորել: Ճիշդ այս պատճառով Իրանի արձագանգը պէտք է լրջօրէն ուսումնասիրել: Յուլիս 2026-ին Հայաստանի մէջ Իրանի դեսպան Խալիլ Շիրողլամի հրապարակաւ ընդունեց, որ Միացեալ Նահանգներու ուղղակի ներկայութիւնը Իրանի սահմաններուն մօտ Թեհրանի համար «օրինական մտահոգութիւն» է՝ Նոյն ժամանակ նշելով, որ Հայաստանի կառավարութիւնը հաւաստիացուցած է՝ ծրագիրը Իրանի դէմ սպառնալիք պիտի չստեղծէ:

Այդ մտահոգութիւնը կարելի է հասկնալ: Թուրքի վրայ ԹՐԻՓՓ-ը Իրանի սահման չի հասցներ ամերիկեան բանակը: Բայց ան կը ստեղծէ ամերիկեան պետական վերահսկիչ ներկայութեան երկարաժամկետ ենթակառուցուածք Իրանի սահմանին անմիջական մերձակայքին:

Ուրեմն օրինական է հարցնել՝

Եթէ ապագային ԱՄՆ-Իրանի հակամարտութիւնը Նոր ռազմական փուլի հասնի, ԹՐԻՓՓ-ի ենթակառուցուածքներուն անվտանգութիւնը ո՞վ պիտի ապահովէ:

Եթէ ամերիկեան տնտեսական կամ պետական շահերը վտանգուին, Ուաշինկթըն պիտի պահանջէ՞ լրացուցիչ անվտանգային միջոցառումներ:

Այսօր բացառուող զինուորական ներկայութիւնը քսան կամ յիսուն տարի ետք ալ բացառուած պիտի մնայ՝

Եթէ երբեւէ այդպիսի փոփոխութիւն տեղի ունենայ, Հայաստան փաստացիօրէն պիտի չդառնայ՝ ամերիկեան ու իրանեան ռազմավարական դիմակայութեան սահմանագիծ:

Այս հարցումները չունին պատասխաններ:

Անշուշտ ամբողջ պատկերը ներկայացնելու համար պէտք է արձանագրել նաեւ, որ 9 սեպտեմբեր 2026-ին Հայաստանի Ազգային ժողովի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանեան յայտարարեց, որ վերջին հայ-իրանեան քննարկումներէ ետք պաշտօնական Թեհրան ԹՐԻՓՓ-ի նկատմամբ այլեւս առարկութիւն չէ ներկայացուցած:

Այս յայտարարութիւնը կարելու է:

Բայց «պաշտօնական առարկութիւն չունենալը» եւ «ռազմավարական մտահոգութիւն չունենալը» Նոյն բանը չեն:

Պետութիւնները երբեմն կը համաձայնին իրականութիւններու հետ ապրիլ՝ առանց այդ իրականութիւնները անվտանգ համարելու:

Հայաստան պարտաւոր է իր յարաբերութիւնները Իրանի հետ պահպանել բացառիկ զգուշութեամբ:

Իրանը Հայաստանի ջորս անմիջական հարեւաններէն մէկն է: Հայ-իրանեան սահմանը Հայաստանի համար տնտեսական, քաղաքական ու անվտանգային կենսական նշանակութիւն ունի:

Հայաստանին համար մեծ սխալ պիտի ըլլայ Ուաշինկթընի հետ գործընկերութիւնը կառուցել Թեհրանի հետ վստահութեան հաշուոյն:

Նոյնքան սխալ պիտի ըլլայ Իրանի մտահոգութիւններուն պատճառով հրաժարիլ Հայաստանի համար օգտակար արեւմտեան տնտեսական կարելիութիւններէն:

Հայաստանը պէտք է ձգտի կամուրջ դառնալ, ոչ՝ ուրիշներու հակամարտութեան սահմանագիծ:

Միւշ այս բոլորը կը կատարուին՝ ի՞նչով զբաղած ենք ՄԵՆԶ..

Ահա հարցին ամենացաւալի մասը:

Մեր շուրջը կը վերածեաւորուի Հարաւային Կովկասը:

Կը փոխուին ուժային հաւասարակշռութիւնները:

Ռուսիան կը նահանջէ որոշ դիրքերէ:

Միացեալ Նահանգները կը տարածուին դէպի Նոր տարածքներ:

Թուրքիա եւ Ազրպէյճան կը խորացնեն իրենց ռազմավարական գործակցութիւնը:

Իրան կը հետեւի իր հիւսիսային սահմանին:

Եւրոպական Միութիւնը կը խորացնէ իր ներկայութիւնը:

Չինաստան, Հնդկաստան եւ Կեդրոնական Ասիա իրենց հաղորդակցական շահերն ունին:

Իսկ Հայաստանի հասարակական-քաղաքական կեանքը կլանուած է այնպիսի ներքին պատերազմով, որ գլխաւոր նպատակ դարձած է ոչ թէ հակառակորդին տեսակէտը յաղթահարելը, այլ՝ հակառակորդը ոչնչացնելը:

Իշխանութիւն-ընդդիմութիւն: Իշխանութիւն-Եկեղեցի:

Դատարաններ: Զերբակալութիւններ:

Փոխադարձ վիրաւորանք:

Դաւաճանի ու գործակալի պիտուկներ:

Այսպիսի աշխարհաքաղաքական միջավայրի մէջ Հայաստան կ'ապրի ներքին անվերջ լեզուակռիւներով իր ուժերը մաշեցնելու շքեղութիւնը:

Իշխանութիւն, ո՛րք էք: Իշխանութիւնը ընտրութեամբ ստացած քուէն պէտք է վերածէ պետական ռազմավարութեան:

Ի՞նչ է Հայաստանի յառաջիկայ տասը կամ քսան տարուան անվտանգութեան տեսլականը: Ի՞նչ պիտի ըլլայ Ռուսիոյ հետ յարաբերութիւններու վերջնական ձեւը: Ո՛րք է Եւրոպական Միութեան հետ մերձեցման ճանապարհային քարտէսը: Ի՞նչ կարմիր գիծեր կան Թուրքիոյ եւ Ազրպէյճանի հետ բանակցութիւններուն մէջ: Ինչպէ՞ս պիտի պահպանուի Իրանի հետ ռազմավարական նշանակութիւն ունեցող սահմանը: Ո՞վ է ինչպէ՞ս պիտի վերահսկէ ԹՐԻՓՓ-ի զարգացումը տասնամեակներ շարունակ: Ո՞ր ազգային հարցերու շուրջ կարելի է բանակցիլ, եւ որո՞նք դուրս պիտի մնան արտաքին պահանջներու դաշտէն:

ԱՅՈՐՈՆ ՇԻՐՏԸՍԵՆՍ

Շաբ.ը՝ էջ 12

VENUS EXCHANGE KALINDJIAN BROS BDL List No. 48

STORE ADDRESS
ROND POINT DORA, KHARRAT BLDG.
BEIRUT - LEBANON

TEL: 961-1-267065 - 961-1-267196
FAX: 961-1-267196
E-mail: venus1@idm.net.lb

MAILING ADDRESS
P.O.BOX: 80341
BOURJ HAMMOUD, BEIRUT - LEBANON

ՇԷՅԽ ՔԱՍԵՄ

«ԴԻՄԱԴՐՈՒԹԻՒՆԸ
ՀՈՂԸ ԱԶԱՏԱԳՐԵԼՈՒ
ՈՒՂԻՆ Է»



Յրգգալլայի ընդհանուր քարտուղար շէյխ Նա- յիմ Քասեմ յայտարարեց. «Դիմադրութիւնը հողը ազատագրելու միակ ուղին է, եւ մնացեալ բոլոր ուղիները ժամանակի կորուստ են»:

«Մենք Լիբանանի մէջ դիմադրութեան ուղին ուղղակի կերպով փորձեցինք եւ տեսանք, թէ այդ ընտրանքը հողն ու մարդը կ'ազատագրէ», նշեց ան:

«Թշնամիին հետ զինուորական համագորու- թիւն բացարձակապէս չկայ, սակայն գիտենք, թէ իրաւունքի եւ հողի տէր ենք եւ պէտք է ամէն գնով դիմադրենք», ըսաւ Յրգգալլայի ընդհանուր քար- տուղարը՝ աւելցնելով. «Նոյնիսկ եթէ Լիբանանի մէջ կացութիւնը օրերով ու ամիսներով երկարի, մենք յաղթական ենք, որովհետեւ դիմացանք եւ թշնամիին արգելք հանդիսացանք իր նպատակ- ները իրագործելու»:

Շէյխ Քասեմ նաեւ նշեց. «Պէտք է աշխատանք տանինք Պաղեստինեան դատին մեր ամբողջ ու- ժով թիկունք կանգնելու»:

ՄԱՀԱՁԳ

ՅՅԴ «Կարմիր լեռ» կոմիտեն կը գումծ իր շրջանի հաւատաւոր ընկերներէն՝

ԶԱՐԵՀ ՔԷՇԻՇԵԱՆԻ

մահը:

ՄԱՀԱՁԳ

Տիար Գեորգ Բէշիշեան եւ որդին՝ Վիգէն Մարո, Նուարդ եւ Սիլվա Բէշիշեաններ Տէր եւ տիկին Դրո եւ Անժի Բէշիշեան

եւ դուստրը՝ Անի Տէր եւ տիկին Արա եւ Լոռի Պաղտասարեան եւ ընտանիք

Վահան, Գարմէն, Լիզա, Դալար եւ Սիրուն Բէշիշեաններ իրենց ընտանիքներով Վարուժան Ուրֆալեան եւ զաւակները Բաֆֆի Ուրֆալեան եւ զաւակները Տէր եւ տիկին Յակոբ եւ Անի Բազրատունի եւ զաւակները իրենց ընտանիքներով Տէր եւ տիկին Սարգիս եւ Լաուրա Ուրֆալեան եւ զաւակները

Տէր եւ տիկին Վիգէն եւ Նայիրի Դարիպեան եւ զաւակը Տիկին Սեւան Ուրֆալեան եւ դուստրը

իր ընտանիքով Տէր եւ տիկին Փոլ եւ Մարալ Եսայեան եւ զաւակները իրենց ընտանիքներով Տիկին Վարդուկ Կարապետեան եւ զաւակները իրենց ընտանիքներով

Բէշիշեան եւ Ուրֆալեան ընտանիքներ Բազրատունի եւ Դարիպեան ընտանիքներ Եսայեան եւ Կարապետեան ընտանիքներ Այնթապեան եւ Բաքիսեան ընտանիքներ Մալգճեան եւ Շերպէթեան ընտանիքներ եւ համայն ազգականներ կը գումծեն իրենց եղբոր, հօրեղբոր, հօրաքրոջ որդիին եւ հարազատին՝

ԶԱՐԵՀ ՔԷՇԻՇԵԱՆԻ

(Ճննայ Այնճար, Լիբանան, 1963-ին)

մահը, որ պատահեցաւ ուրբաթ, 18 սեպտեմբեր 2026-ին, յետ հիւանդութեան:

Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի պի- տի ունենայ այսօր՝ երկուշաբթի, 21 սեպտեմբեր 2026-ին, կէսօրուան ժամը 1:00-ին, Այնճարի Ս. Պօ- ղոս եկեղեցւոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը պիտի փոխադրուի Այնճարի գերեզմանատունը:

- Ներկայս ընդունիլ իբրեւ մահազոյ:
- Յաւակցութիւնները կ'ընդունուին թաղման օրը կէսօրէ առաջ ժամը 11:00-էն մինչեւ երեկոյեան ժամը 7:00, «Գ. Կիւլպէնկեան» սրահին մէջ:

•**ԾԱՆՕԹ.- Փոխան ծաղկեպսակի՝** նուիրատուու- թիւները կը խնդրուի կատարել **ԼՕԽ-ի** «Աղթամար» մասնաճիւղին:

Հաւցէ Account Number: 3002865763002
Iban Number:
LB 800390000003002865763002

ՌԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԹ «ՀԱՐԱՒԱՅԻՆ ԼԻԲԱՆԱՆԸ
ԲԱՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԽԱՂԱՔԱՐՏ ԶԷ,
ԱՅԼ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՀՈՂ»

Մարոնիներու Ռայի պատրիարքը կիրակի օր «Լիբանանեան դիմա- դրութեան նահատակնե- րու» հոգեհանգստեան արարողութեան ընթաց- քին նշեց. «Խաղաղութիւ- նը իրաւունքն զիջում չէ, որովհետեւ կը կառուցուի կամով, քաջութեամբ, արդարութեամբ եւ իրա- տւոյնքին կառչելով»:

« Դ ա ս ա ր ա կ ա ն պաշտօնը, եթէ ծառայու- թեան համար չէ, տիրապետման կը վե- րածուի, եւ քաղաքականութիւնը, եթէ մարդոց ծառայութեան համար չէ, բաժնեմասերու շուրջ տեւական պայ- քարի կը վերածուի», ըսաւ ան:

«Լիբանանը այսօր կարիքը ունի պե- տական այրերու, որոնք հայրենիքը իրենց դիրքերէն վեր կը դասեն: Լիբա- նանը հասարակութեան մէջ ալ կարիքը ունի մարդոց, որոնք կը մերժեն գրգռու- թեան հռետորաբանութիւնը, տեղեկա- տուութեան մէջ՝ պատասխանատու խօսքի, որ տարակարծութիւնը թշնա- մանքի չի փոխեր, իսկ տուներուն մէջ դաստիարակութեան, որ իին ատելու- թիւները նոր սերունդին ժառանգ չի ձգեր», նշեց մարոնիներու պատրիար- քը:

«Լիբանանի պաշտպանութիւնը կը սկսի գէնքը պետութեան մենաշնորհը դարձնելով, ուժեղ բանակով, ամբող- ջական գերիշխանութեամբ, անոր որոշումը պաշտպանող անկողմակա- լութեամբ, ամբողջական Հարաւով եւ



պետութեամբ մը, որ իր զաւակներուն վստահութեան կը վերատիրանայ», ըսաւ ան՝ աւելցնելով. «Լիբանանը իր անկողմակալութեամբ իր շրջապա- տէն փախուստ չի տար եւ արդար դա- տեր չի լքեր, այլ երկխօսութեան վրայ կը կեդրոնանայ»:

«Հարաւային Լիբանանը բանակցու- թեան խաղաքարտ չէ, այլ՝ լիբանա- նեան հող, անոր բնակիչները քաղաքացի- ներ են, որոնք անվտանգութեան, կենս- քի եւ կայունութեան իրաւունք ունին: Պէտք է յարձակումները դադրին, եւ հողն ու իրաւունքները պահպաւտին», շեշտեց մարոնիներու պատրիարքը:

«Ինչ կը վերաբերի բանակցութիւն- ներուն, մենք կը զօրակցինք ամէն քա- ղաքական ու դիւանագիտական լուրջ ուղիի, որ կը պաշտպանէ Լիբանանը, զայն պատերազմէ գրծ կը կացուցէ, ինչպէս նաեւ հեռացումը, իրաւունքնե- րը, գերիշխանութիւնը, անվտանգու- թիւնը եւ կայունութիւնը կ'իրագործէ», նշեց Ռայի պատրիարքը:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐԳ ԼՈՒԻՐԵՐ

- **ՆԻՏԱ ՌԻԱԹԱՆ**՝ օրաթերթի տե- ղեկութիւններուն համաձայն, «վարչա- պետ Սալամ Նիւ Եորք իր այցելութեան ընթացքին ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի ընթացքին իր արտասանելիք խօսքին մէջ եւ հանդիպումներուն ընթացքին պիտի փոխանցէ Իսրայելի հետ բա- նակցային հոլովոյթին կառչելու Լիբա- նանի դիրքորոշումը եւ վերահաստա- տէ գէնքի մենաշնորհման ծրագիրները գործարդելու պետութեան վճռակա- մութիւնը»:
- **ԱՐԲԻԻՐՆԵՐ** «Մուտուն»-ին. «Ֆի- ՆԻԻԼ-ին այլընտրանքային եւրոպա- կան ուժի մը փոխարինման ընտրանքը տակաւին ամենէն շատ առիթը ունի, եւ Ֆրանսան ու Իտալիան աշխատանք կը տանին յստակացնելու տարագը եւ ճշդելու այս ուժին առաքելութիւնն ու իրաւասութիւնները»:
- **ՄՈՒՏՈՒՐԱ**՝-Ի տեղեկութիւններուն համաձայն, «ՖԻՆԻԼ-ի այլընտրանքին շուրջ համաձայնութիւնը չէ ապահով- ւած. մինչ Լիբանան կը պնդէ ՖԻՆԻԼ-ի առաքելութիւնը երկարաձգելու վրայ, Իսրայէլ կը մերժէ անոր այլընտրանքին մէջ իտալական ուժերու ներկայութի- ւը, իսկ Իտալիան հետագային վերա- պահութիւն յայտնեց, երբ իմացաւ, թէ Յրգգալլան իր համակիր զանգուածին մէջ գտնուելու համար իրեն անհրա- ժեշտ ծածկոյթ չէ ապահոված»:
- **ԴԻԲԱԼԱԳԻՏԱԿԱՆ** հաւաստի տե- ղեկութիւններ «Ժումհուրիա» օրաթե- թին. «Տակաւին մեծ խոչընդոտներ ար- գեցը կը հանդիսանան ՖԻՆԻԼ-ը հա- րաւային Լիբանանի մէջ պահելու կամ անոր այլընտրանքային ծիրի մշակ- ման համար, եւ այս հարցին վերաբե- րեալ ամերիկեան կողմը պաղ վերա- բերմունք կը ցուցաբերէ»:
- **ՊԱՏԱՍԿԱՆԱՏՈՒ** աղբիւր մը «Ժումհուրիա» օրաթերթին. «ՖԻՆԻԼ- ի թղթածրարը մեր հիմնական մտահո- գութիւնն է, որովհետեւ պէտք է լուծու- ի՝ իբրեւ հարաւային Լիբանանի մէջ անվտանգութեան եւ կայունութեան հաստատման տարր: Խորհրդակցու- թիւններ տեղի կ'ունենան միջազգային տարբեր մակարդակներու վրայ եւ ՄԱԿ-ի մակարդակով»:
- **ՄԱԿ-ԵՆ** բարձրաստիճան աղբիւր մը «Ժումհուրիա» օրաթերթին. «Զեմ յաւակնիր իմանալ, թէ պետութիւնները ի՞նչ կը ծրագրեն կամ կառավարու- թիւնները ի՞նչ կրնան որոշել, սակայն ընդհանուր պատկերի առարկայական դիտարկումով մը կ'ենթադրեմ, թէ հարցերը ճահճացման կամ սառեցումի ենթարկուած են եւ տեղեյայի մէջ պի- տի մնան, մինչեւ Քլետեթի ընտրու- թիւններն ու Ամերիկայի ընտրութիւն- ներէն տեսք»:

Շար.ը՝ էջ 12

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՆԿԱՅՈՒԹԵԱՆ...

Շարունակուած Ա. Էջէն

Շահան արքեպիսկոպոսին զխաւորութեամբ միաբան հայրեր աղօթքներով, անտարանական ընթերցանութեամբ եւ սաղմոսներու արտասա- նութեամբ, սուրբ խորանէն կատարեցին Հանրա- պետական մաղթանքի արարողութիւնը: Սրբա- զան հայրը աղօթք բարձրացնելով առ Աստուած՝ աղերսեց. «Լսէ՛ ծառաներուդ աղաչանքները եւ անսասան պահէ՛ Քու ողորմութեամբդ վերա- կանգնած Հայաստանի իշխանութեան գահը՝ մեր ազգին հանրապետութիւնը, Տէ՛ր: Անեցո՛ւր շնորհքն ու իմաստութիւնը բոլոր անոնց, որոնք իշխանութեան պատասխանատուութիւնը ունին, որպէսզի կարող ըլլան ուղիղ դատաստանով եւ արդարութեամբ առաջնորդել Քու ժողովուրդը: Մեր իրամանատարներուն եւ զօրքին ոգին անե- լիո՛վ զօրացուր: Մեր մէջ հաստատե՛ սրբութեան եւ խոհեմութեան սերը՝ ճանչնալու իմաստութիւ- նը եւ հասկնալու խրատը, որպէսզի կատարենք օրէնքի ճամբով մեզի տրուած պարտաւորութիւն- ները: Երկարե՛ ձեռքդ, ո՛վ Տէր, եւ օրհնէ՛ ամբողջ հայ ժողովուրդը, մեր ազգը եւ մեր սուրբ եկեղե- ցին: Օրհնէ, Տէ՛ր, այս եռազոյն դրօշը: Եւ այնպէս, ինչպէս ջրիեղեղէն տոք Արարատ լեռան վրայ ծի- րանի գօտիով Քու եւ մարդկութեան միջեւ ուխտ հաստատեցիր, հիմա ալ, այնքան սուրբ եւ հերո- սական արիւնի հեղումէ տոք, այս գեղեցիկ գոյնե- րով դրօշը Զեզի հետ կնքուած մեր ուխտին նշա- նը թող ըլլայ»:

Ապա, Առաքել վարդապետ յաւուր պատշաճի քարոզեց: Հայր սուրբը քարոզի բնաբան վերցու- ցած էր Դաւիթ մարգարէի որդւոյն՝ Սողոմոն Իմաստունի հետեւեալ բառերը. «Եթէ Տէրը Ինք չշինէ տունը, զուր տեղ կը յոգնին զայն շինողե- րը: Եթէ Տէրը Ինք չպահպանէ քաղաքը, զուր տեղ կը հսկեն պահապանները» (127.1): Խօսելէ տոք աստուածաշնչական հասկացողութեամբ «Տէրը Ինք չշինէ», «տունը» եւ «քաղաքը» բառերուն մա- սին, հայր սուրբը անդրադարձաւ հաւատքի կա- րեւորութեան, որ կ'ենթադրէ Աստուծոյ նկատ- մամբ վստահութիւն ունենալ եւ ապաւինիլ Ասոր՝ մեր առօրեայ կեանքի բոլոր պայմաններուն մէջ: Ապա, խօսելով Հայաստանի վերանկախութեան 35-ամեակին մասին՝ ան ըսաւ. «Այսօր մեր ժողո- վուրդին առջեւ ծառացած մեծագոյն հարցերէն մէկը հոգեւոր Հայաստանն ու սփիւռքը վերա- կազմակերպելն է, հոգեւոր տուն եւ բնակիչ ունե- նալն է: Անոնց վերակազմակերպման աշխա- տանքը կը սկսի ընտանիքէն: Տունը առաջին եկե-ղեցին է, ուր մասուկը կը սորվի աղօթել, ներել, սիրել եւ Աստուծոյ վստահիլ: Երբ ընտանիքին մէջ Քրիստոս կ'ապրի, այդ ընտանիքը արդէն իսկ փոքրիկ հոգեւոր Հայաստան եւ հոգեւոր սփիւռք կը դառնայ: Հայաստանը եւ սփիւռքը պէտք է մէկ հոգեւոր ընտանիք ըլլան, մէկ հոգեւոր մարմին դառնան՝ ունենալով Նոյն առաքելութիւնը, Նոյն նպատակը եւ Նոյն հաւատքը: Մեզի պէտք է ո՛չ միայն ազգային հաւաքական յիշողութիւն, այլ նաեւ՝ հաւաքական հաւատք եւ առաքելութիւն»: Եզրափակելով իր քարոզը՝ հայր սուրբը ըսաւ. «Սիրելիներ՛, եկե՛ք անսասն կրամ Ա. կաթողիկո- սի կոչին, եւ այս տարին իրապէս դարձնենք հայ ազգի հոգեւոր վերանորոգման տարին: Թող Տէրը Ի՛նք վերանորոգէ մեր հոգիները, օրհնէ մեր ըն- տանիքները, պահպանէ մեր ժողովուրդը, անսա- սան պահէ մեր եկեղեցին եւ զօրացնէ Հայաս- տանն ու սփիւռքը»:

Նշենք, որ Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսու- թեան թեմերու բոլոր եկեղեցիներուն մէջ կատա- րուեցաւ Հանրապետական մաղթանք եւ Եռա- գոյն դրօշի օրհնութիւն:




ԳՈՀԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ ՎԱՄՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՑ

(ՀՀ-ի ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 35-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ)

«Յայաստանդ անուն ցանկալի, ձայն գորովական եւ փարեյի, երկնաւոր երգոցն նուազաց արծանի, յորում ամենայն յուշք անցելոյն եւ յուշք ապառնեացն պահին, զոր ոչ կարացին հանել քերել ի շրթանց մերոց մանաւանդ թէւ ի սրտից բռունց աշխարհիս եւ դիպուածք ժամանակաց, հնչեաց՝ այժմ ծագաց ի ծագս երկրի, եւ որք ի հեռաստանեայ սահմանա աշխարհի սփռեալ կան լծոցնութեամբ, ամենայն հայկազունց, ի լուր նորա՝ որպէս ամպս թռուցեայս ծագախառն երամովին եկեցցեն առ նա, զի փրկութիւն Տեառն շնաս մեզ»։

«Յայաստանդ՝ անուն ցանկալի, ձայն գորովական ու փարեյի, երկնային երգերու նուագին արծանի՝ Դուն այն սրբազան անունն եւ, որուն մէջ անցեալի բոլոր յուշերն ու ապագայի բոլոր տեսիլքները կը հանգչին. յուշեր, զորս աշխարհիս բախտն ու ժամանակներու դառն հարուածները զկրցան արմատախիլ ընել մեր շրթներէն, մանաւանդ՝ մեր սրտերէն։ Թող հիմա անոր ձայնը հնչէ՝ աշխարհի մէկ ծայրէն միւրոյ, եւ հեռաւոր սահմաններու վրայ սփռուած ու օտարութեան մէջ լծոցնող բոլոր հայկազունց, երբ լսեն անոր կանչը, թող ամպերու պէս թէ առած, ծագախառն երամի մը նման, գան ու հասնին անոր մօտ, քանզի Տիրոջ փրկութիւնը հասած է մեզի»։



ԹՈՐԳՈՎ ԱՐԶ. ԳՈՒՆԱԿԵԱՆ

23 օգոստոս 1990 թուականին Յայաստանի Հանրապետութեան Գերագոյն խորհուրդը ընդունեց «Յայաստանի անկախութեան մասին» հռչակագիրը։ Փաստաթուղթը դարձաւ այն քաղաքական եւ իրաւական հիմքը, որուն վրայ յաջորդող ամիսներուն պիտի զարգանար Յայաստանի անկախ պետականութեան վերականգնման գործընթացը, իսկ 21 սեպտեմբեր 1991 թուականի հանրաքուէով հայ ժողովուրդը պիտի հաստատեր անկախութեան իր կամքը։ Այս տարեթիւերը այսօր արդէն Յայաստանի նորագոյն պատմութեան առանցքային փուլերը դարձած են։

Սակայն 1990-1991 թուականներու իրադարձութիւնները ինքնաբոյի եւ պատմական պատահականութեան մէջ ծնած դէպքեր չէին։ Անոնք կը շարունակէին հայ ժողովուրդի պետականութեան վերականգնման աւելի հին ընթացք մը, որ իր նախորդ մեծ փուլը ունեցած էր 28 մայիս 1918 թուականին՝ Յայաստանի Ա. Հանրապետութեան ստեղծումով։ Առաջին Հանրապետութեան կարճատեւ գոյութիւնը, անոր դիմագրաւած պատերազմները, քաղաքական ու տնտեսական ծանր պայմանները եւ 1920-ի վերջաւորութեան անկախ պետականութեան կորուստը չվերացուցին անկախ Յայաստանի գաղափարը։ Այդ գաղափարը շարունակեց գոյատեւել թէ՛ Յայաստանի եւ թէ՛ սփիւռքի մէջ՝ քաղաքական, մշակութային, գրական եւ եկեղեցական տարբեր դրսեւորումներով։

Այս պայմանական միջավայրին մէջ առանձնապատկ տեղ կը գրաւէ Թորգոմ արք. Գուշակեանի [1] «Գոհաբանական մաղթանք վասն Հանրապետութեան ազգիս հայոց» ստեղծագործութիւնը։ Սոյնը առաջին հերթին հետաքրքրական է իբրեւ եկեղեցական-ծիսական արարողութիւն, սակայն իր պատմական նշանակութիւնը շատ աւելի ընդարձակ է։ Ան կը վկայէ, թէ Առաջին Հանրապետութեան գոյութիւնը հայ եկեղեցական շրջանակներուն մէջ ինչպէ՛ս կ'ընկալուէր եւ ինչպիսի՛ լեզուով կը դրսեւորուէր պետականութեան հանդէպ վերաբերմունքը։

Պատմութիւնը կը վկայէ, որ գոհաբանական նման մաղթանք մը Ս. Էջմիածնի մէջ եւս կատարուած է երջանկայիշատակ Գեորգ Ե. Սուրենեանց Ամենայն հայոց կաթողիկոսին տօնօրինութեամբ 28 մայիս 1919 թուականին՝ Յայաստանի Հանրապետութեան միամետայ տարեդարձին առիթով։ Այս առնչութեամբ կարելի է ենթադրել, թէ Հանրապետութեան տարեդարձը հանդիսատեսներու նշելու կաթողիկոսական տօնօրինովը նախապէս հաղորդուած ըլլալու էր նաեւ սփիւռքի մէջ գտնուող Էջմիածնական թեմերու հոգեւոր առաջնորդներուն։ Յետեւաբար հնարաւոր է, որ այս տօնօրինումը եղած ըլլայ այն հիմնական դրդապատճառներէն մին, որուն ընդառաջ Թորգոմ արք. Գուշակեան յորինած է իր «Գոհաբանական մաղթանք վասն Հանրապետութեան ազգիս հայոց» ստեղծագործութիւնը։

Ի դէպ, ներկայիս դժուար է ստոյգ պարզել, թէ 1919-ին Ս. Էջմիածնի մէջ Հանրապետութեան տարեդարձին առթիւ ի՞նչ արարողակարգ տեղի ունեցած է եւ ծիսական ինչպիսի՛ բնագիր մը գործածուած է։ Ամեն պարագայի, քիչ հաւանական կը թուի, որ այնտեղ գործածուած ըլլայ Թորգոմ սրբազանի «Գոհաբանական մաղթանք վասն Հանրապետութեան ազգիս հայոց»-ը։ Բաց աստի, Ս. Էջմիածնի մէջ ցայսօր կատարուող «Կարգ մաղթանք վասն Հանրապետութեան Յայաստան աշխարհի» արարողակարգը ունի տարբեր կառոյց եւ բովանդակութիւն։ Պետք է ըսել նաեւ, որ ան շատ աւելի համառօտ է՝ քան Թորգոմ արք. Գուշակեանի մշակումը։ Այս ուղղութեամբ մեր հետազոտութիւնը ցոյց կու տայ, որ անոր հիմքը կը հանդիսանայ Սիմէոն Ա. Երեսնցի կաթողիկոսին (1710-1780) մշակած «կայսերական» մաղթանքը՝ Նուրիւնու ռուսաց Եկատերինա կայսրուհիին։ Ուստի՝ ներկայիս Ս. Էջմիածնի մէջ կատարուող հանրապետական մաղթանքը պարզապէս 1919-ին ստեղծուած

նոր ծիսական բնագիր մը չէ։ Անոր լեզուին եւ կառուցուածքին տակ կը շարունակուի շատ աւելի հին հայկական եկեղեցական ասանդութիւն մը, որուն մէջ եկեղեցին կ'աղօթէ երկրի, իշխանութեան եւ ժողովուրդի պահպանութեան համար։ Սիմէոն Երեսնցի 10 յուլիս 1771 թուականին առ ի երախտագիտութիւն Կայսերական Ռուսիոյ՝ կը հրապարակէ կոնդակ մը, իսկ 5 մայիս 1780 թուականին պաշտօնապէս Եկատերինա կայսրուհիին կը մատուցուի իր կազմած «Տօնախմբութեան» տետրակի հայերէն բնագիրը՝ կից ռուսերէն թարգմանութեամբ [2]։ Սոյնը Ռուսական կայսրութեան ձօնած ծիսական մաղթանք մըն էր՝ գոհաբանութիւն մը, որ կազմուած էր շարք մը սաղմոսներէ, աղօթքներէ, աստուարական ընթերցումներէ, առաքելական թուրքերէ քաղուածքներէ, ինչպէս նաեւ ԴՁ. շարականի մը հանդիսաւոր երգեցողութիւնէ, զոր հեղինակած էր Սիմէոն Երեսնցի կաթողիկոսը [3]։ Այս շարականին առաջին տողը կազմուած էր «Ամենազօր Աստուած եւ թագաւոր յափտենից» [4] բառերով։ Աղօթքին մէջ Աստուծմէ կը խնդրուի պահպանել կայսրուհիին իշխանութիւնը՝ «անսասան եւ անպարտելի» [5]։

Այսօր ալ նոյն «Ամենազօր Աստուած եւ թագաւոր յափտենից» ԴՁ. շարականի երգեցողութեամբ կը սկսի «Կարգ մաղթանք վասն Հանրապետութեան Յայաստան աշխարհի» մաղթերգը, սակայն վերամշակուած եւ կայսերական իշխանութիւնը փոխարինուած հանրապետական տարբերակով՝ պահպանելով նոյն աղօթական կաղապարը, որ վերածեակներուց մէջ Յայաստանի Հանրապետութեան համար։

Արդարեւ, եկեղեցական այս մաղթանքի լեզուն քաղաքական իշխանութեան փոփոխութենէ անդին կը պահպանէ իր հիմնական կառուցուածքը, բայց ամեն պատմական փուլի գայն կը լրացնէ նոր պետական իրականութեան անունով։ Թագաւորութիւնը փոխարինուած է հանրապետութեամբ, սակայն աղօթքին բուն խնդրանքը կը մնայ նոյնը՝ պահպանել հայրենի երկիրը, անսասան դարձնել անոր իշխանութիւնը եւ ժողովուրդը պաշտպանել վտանգներէ։

Ի տարբերութիւն Էջմիածնական ասանդութեան, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան Անթիլիասի մայրավանքէն, ինչպէս նաեւ թեմական կառոյցներէ ներս, սովորաբար, կը կատարուի Թորգոմ արք. Գուշակեանի մշակած «Գոհաբանական մաղթանք»-ը, որ միաբան հայրերուն կողմէ թարգմանուած է նաեւ արեւմտահայերէնի եւ կը կը՝ «Գոհաբանական մաղթանք Յայաստանի Հանրապետութեան համար» [6] խորագիրը։

Թորգոմ արք. Գուշակեան, որ այդ տարիներուն Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդն էր, Յայաստանի Հանրապետութեան գաղափարը ներմուծեց եկեղեցական աղօթքի շրջանակէն ներս։ Մաղթանքին մէջ Հանրապետութիւնը, անոր իշխանութիւնը, ժողովուրդն եւ զինուորութիւնը, ինչպէս նաեւ ազգային պայքարի նախաւանկները կը դառնան յատուկ յիշատակութեան եւ աղօթքի առարկա։ Այս հանգամանքը կարեւոր սկզբնաղբիւր է՝ հասկնալու համար Առաջին Հանրապետութեան հանդէպ ցուցաբերուած սփիւռքաբան եկեղեցական եւ ազգային մտածողութեան երեսակները։

Այս մաղթանքին պատմութիւնը, սակայն, ունի նաեւ իր մատենագիտական անորոշութիւնները։ 1968-ին հրատարակուած «Բագին» ամսագիրի Յայաստանի Հանրապետութեան 50-ամեակին նուիրուած բացառիկ թիւը կը ներկայացնէ Թորգոմ արք. Գուշակեանի «Գոհաբանական մաղթանք»-էն քանի մը հատուածները [7] կապելով գայն 1920 թուականի հրատարակութեան հետ։ Միւս կողմէ, հետագայ յիշատակութիւն մը՝ 1980-ին «Յայրենիք» օրաթերթին մէջ կը վկայէ, որ Գուշակեան արք. արդէն 1919-ին Վախիճի մէջ կազմած էր Յայաստանի Հանրապետութեան համար նախատեսուած գոհաբանական աղօթամատեան մը, որուն գործածութեան մասին կը հաղորդուի նաեւ Աղեքսանդրիոյ Ս. Պօղոս Պետրոս եկեղեցւոյ մէջ կատարուած արարողութեան առթիւ [8]։ Այս վկայութիւնները կը յուշեն, որ մեզի հասած «Հանրապետութեան մաղթանք»-ը պետք է դիտարկել 1919-1920 թուականներու ազգային-եկեղեցական կեանքի աւելի լայն համաձորին մէջ։

Այս առումով՝ Գուշակեան սրբազանին յորինած «Հանրապետական մաղթանք»-ը հետաքրքրական զուգահեռ մը կը ստեղծէ 1990 թուականի Անկախութեան հռչակագիրին հետ։ Մէկուն մէջ հայոց պետականութեան վերականգնումը կը ձեւակերպուի եկեղեցական աղօթքի եւ գոհաբանութեան լեզուով, միւսին մէջ՝ իրական եւ թաղաքական փաստաթուղթի մը յատուկ բառապաշարով։ Սակայն զոյգ պարագաներուն ալ առանցքային հասկացութիւնը նոյնն է՝ Յայաստանի Հանրապետութիւնը եւ հայ ժողովուրդի ինքնիշխան պետականութեան հաստատումը։

Արդարեւ, Յայաստանի անկախութեան 35-ամեակին առիթով այս զուգահեռը ուսումնասիրելը զուտ խորհրդանշական ձեւակերպութիւն մը չէ։ Ան հնարաւորութիւն կու տայ մեզի աւելի երկար պատմական հեռանկարի մը մէջ դիտելու 1990-1991-ի երեսնամյա խաղման գործընթացը եւ գայն առնչելու 1918-1920 թուականի պետական փորձառութեան հետ։ Թորգոմ արք. Գուշակեանի «Հանրապետական մաղթանք»-ը այդ կապին քիչ ծանօթ, բայց ուշագրաւ վկայութիւններէն մէկն է։

Վերոգրեալ նշուեցաւ, որ Թորգոմ սրբազան «Հանրապետական մաղթանք»-ը մեծ հաւանականութեամբ յորինած է 1919 թուականին Աղեքսանդրիոյ մէջ։ Հայ ժողովուրդը, ի Յայաստան եւ ի սփիւռս աշխարհի, մեծ խանդավառութեամբ կը նշէր 28 մայիս 1918 թուականին ստեղծուած Յայաստանի Ա. Հանրապետութեան առաջին տարեդարձը։ Այս առնչութեամբ Սմբատ Յոխիկեան «Յայրենիք» օրաթերթին մէջ հրապարակած իր յուշագրութեան մէջ կը վկայէ.

«Գահիրէի մէջ ազգային վսեմ հոգիով տոգորուած՝ եգիպտահայոց թեմակալ Սրբազան Առաջնորդ՝ Երջանկայիշատակ Թորգոմ Եպիսկոպոս Գուշակեան, այս առթիւ յորինեց գոհաբանական աղօթամատեան մը ի նշան գոհունակութեան հայ Ազգի պարգետուած ազատութեան եւ պետական նոր կեանքին։ Գրքով մըն էր, կողքերը շրջանակուած կարմիր կապտոյ նարնջագոյն հայկական նորածիրոջ արջակին գոյներով [...] Առատեանի Ս. Պօղոս Պետրոս եկեղեցիին մէջ տեղի ունեցաւ մասնաւոր արարողութիւն, որուն ըն-

թացքին հոգեւորական դասը զգեստաւորուած, ի ձեռնի ունենալով Թորգոմ Սրբազանի յորինած աղօթամատեանը, բարձրացաւ Ս. Խորան։ Կը ղօղանջէր եկեղեցւոյ զանգակը. երկիւղած ժողովուրդը հոգեկան մեծ բերկրանքով հետեւեցաւ սրբազան արարողութիւններուն» [9]։

Եթէ Թորգոմ արք. Գուշակեանի յորինած սոյն «Գոհաբանական մաղթանք»-ը այդ տարի եկեղեցւոյ մէջ կատարուած էր, ապա շատ հաւանական է, որ արարողութեան կամ մաղթանքին ամբողջ բնագիրը սահմանափակ տպաքանակով տպագրուած ըլլայ թեմական գրքոյկի մը ձեւով, զուցէ, սակայն, առանց առանձին մատենագիտական գրառում մը ունենալու։ Նոյնը կրկնուած ըլլալու է 1920 թուականին, որմէ, ցաւօք, կարելի չեղաւ գտնել օրինակ մը համապատասխան եզրակացութեան մը յանգելու համար՝ նշելով տպագրութեան ճշգրիտ վայրը եւ թուագրութիւնը։ Մեր տրամադրութեան տակ գտնուող ամենահին տարբերակը 16 էջերէ կազմուած եւ 1947-ին Երուսաղէմի մէջ տպագրուած օրինակն [10] է։ Ապա ան ունեցած է այլ հրատարակութիւն մը Գահիրէի մէջ 1954 թուականին, որուն կողքը կը նշէ. «Գոհաբանական մաղթանք վասն Հանրապետութեան ազգիս հայոց, կատարելի յեկեղեցիս հայոց վիճակին Եգիպտոսի (պատրաստուած 1920-ին, առաջնորդ Թորգոմ արք. Գուշակեանի կողմէ) [11]»։ Սոյնը կը հանդիսանայ գրքոյկին Բ. տպագրութիւնը՝ յուշելով, որ Ա.-ը հրատարակուած ըլլալու է նմանապէս Գահիրէի մէջ՝ հաւանաբար 1920 թուականին։ Փոքրածաւալ, բայց նոյնքան կարեւոր ձեռնարկ մը հետագայ տարիներուն ունեցած է այլ հրատարակութիւններ եւ թարգմանուած է նաեւ անգլերէնի [12], որովհետեւ ան տարուէ-տարի Յայաստանի անկախութեան տօնին առթիւ հանգամանօրէն հնչած է Հայ եկեղեցւոյ նուիրապետական Աթոռներուն եւ վարչականօրէն անոնց ենթակայ թեմերու եկեղեցիներուն մէջ։

Աւելի քան դար մը առաջ ստեղծագործուած Թորգոմ արք. Գուշակեանի «Գոհաբանական մաղթանք»-ը խորապէս արմատացած է Հայ եկեղեցւոյ ծիսական ասանդութեան մէջ։ Ան կազմուած է սաղմոսներէ, շարականներէ, Հին եւ Նոր կտակարաններէն քաղուած ընթերցումներէ, քարոզներէ, աղօթքներէ ու օրհնութեան բանաձեւերէ համադրուած հատուածներով, որոնք վարպետօրէն միահիւստելով՝ կը կազմեն Հանրապետութեան գաղափարին պատասխանող ամբողջական եւ ներդաշնակ յորինուածք մը։ Ընդ չէ, որ Թորգոմ սրբազան իր նիւթին ատաղձը վերցուցած է Հայ եկեղեցւոյ արարողական կեանքի մէջ ասանդուած մատենագրական բնագրերէ՝ «Մաշտոց», «Ժամագիրք», «Շարակնոց», «Ճաշոց» եւ այլն, սակայն ան միաժամանակ բերած է իր ուրոյն ներդրումը՝ յօրինելով նիւթին համապատասխանող մասնաւոր քարոզներ եւ գոհաբանական աղօթքներ, զորս կը ներկայացնենք ստորեւ։

Անդրադառնալով «Գոհաբանական մաղթանք վասն Հանրապետութեան ազգիս հայոց»-ի կառոյցին՝ կարելի է գլան բաժնէլ համառօտ ինկզ գլխաւոր հատուածներու.

Ա) Հրաւեր՝ անկախական աղօթք
Արարողութիւնը կը սկսի «Եղբարք սիրեցեալք» դիմումով։ Ան ժողովուրդը կը հրաւիրէ «սուրբ սրտիս անտարատուն հաւատով» միաբան աղօթելու եւ գլխաւոր փառաբանելու։

Բ) Գոհութիւն՝ Աստուծոյ այցելութեան եւ հայոց ազատագրութեան համար
Կը յիշատակուի Աստուծոյ ողորմած միջամտութիւնը, որ հայոց ազգը ու եկեղեցին փրկած է նեղութիւններէ եւ «վերստին շնորհած է գոհաբանութիւն Յայրենեաց»։ Այսինքն՝ Հանրապետութեան ստեղծումը կը ներկայացուի իբրեւ վերագտնուած հայրենիք եւ վերականգնուած ժառանգութիւն։

Գ) Աղերս՝ Հանրապետութեան պահպանութեան եւ եկեղեցւոյ պայծառութեան համար

Այստեղ Հանրապետութեան պահպանութեան եւ եկեղեցւոյ պայծառութեան խնդրանքը կը հնչեն միեւնոյն աղօթական շունչով՝ հայրենիքի պետական գոյութեան եւ ազգային-եկեղեցական կեանքի բարորդութիւնը ներկայացնելով իբրեւ փոխկապակցուած իրականութիւն։

Դ) Աղօթք՝ երկրի ղեկավարներուն, ծառայողներուն եւ հայոց բանակին համար

Կը խնդրուի իմաստութիւն եւ կարողութիւն՝ «գլխաւորաց ազգիս» եւ «ամենայն վաստակաւորաց», որպէսզի հայրենիքը կերտուի։ Ապա կայ յատուկ աղօթք մը զօրավարներուն եւ զինուորներուն համար, որոնք գոհաբերութիւնը կը նկարագրուի որպէս պատարագ՝ սրբազան զոհի մը փոխաբերութեամբ։

Ե) Բարոյական յորդոր
Վերջապէս, աղօթքը քաղաքական գոյութեան պահպանութենէ կը բարձրանայ դէպի ազգային ու բարոյական պատասխանատվութեան ոլորտ՝ հայ ժողովուրդին մէջ առաւել եւս զօրացնելու համար «յորդորումս սիրոյ եւ ի գործ բարեաց» խորհուրդներուն իրագործումը։ Այս եզրափակիչ գերտրով Հանրապետութեան կեանքը կը կապուի ոչ միայն պետական հաստատութեան, այլ նաեւ սիրոյ, բարեգործութեան եւ բարոյական վերանորոգութեան հետ։

«Գոհաբանական մաղթանք»-ին ամենագեղեցիկ եւ տպաւորիչ բաժիններէն մին, անտարակոյս, այն քարոզն է, զոր քահանան կամ սարկաւազը եկեղեցւոյ եւմեն կ'ընթերցէ՝ «Եղբարք սիրեցեալք» բառերով ուղղակի դիմելով հաւատացեալ ժողովուրդին։ Թորգոմ սրբազանի բերուն գրչին արգասիքը եղող այս գրական գոհարին մէջ խտացած են հայ ժողովուրդի դարաւոր տառապանքն ու անդառնալի կորուստներուն ցաւը, երբեմնի իր հզօր պետականութիւններու անկման ողբերգութիւնը եւ այս բոլոր արհաւիրքներուն ընդմէջէն Աստուծոյ շնորհիւ ստացուած մեծագոյն պարգեւը՝ հայրենիքի վերականգնումն ու հայոց պետականութեան վերստեղծումը։

Այս իմաստով՝ քարոզը ոչ միայն գոհաբանական աղօթքի մը բաղադրիչն է, այլեւ հայոց պատմական յիշողութեան խտացեալ վկայութիւն՝ տառապանքն ու կորուստէն ղեպի ազգային վերածնունդ եւ պետականութեան վերականգնում։

Արդարեւ, սոյն քարոզը իր ամբողջ իմաստը կը ստանայ այն բարդ ու ճակատագրական պատմական իրադարձութեան խորապատկերին վրայ, որուն մէջ ծնունդ առաւ Յայաստանի Հանրապետութիւնը։ 1918-ի մայիսեան հերոսամարտերէն ետք վերականգնուած հայկական պետականութիւնը տակաւին իր գոյութեան առաջին տարիներուն կը դիմագրաւէր պատերազմներու, գաղթականութեան, սովի եւ տնտեսական ծանր պայմաններու, ինչպէս նաեւ Հայոց ցեղասպանութեան հետեւանքներուն ծանր բեռը։ Այս պայմաններուն մէջ Հանրապետութեան գոյութիւնը ինքնին վերջնական ձեռքբերում մը չէր, այլ պահպանման եւ ամրապնդման կա-

GBS
LEBANON
GENERAL BEARING SERVICES CO.

**BUILT ON BEARINGS.
DRIVEN BY
RELIABILITY.**

BEARINGS | LUBRICATION | POWER TRANSMISSION
CONDITION MONITORING | RELIABILITY SERVICES

WWW.GBS.CO.COM

INDUSTRIAL BRANDS & SOLUTIONS

LOCTITE
ADHESIVES & SEALANTS

LUBCON
LUBRICATION SOLUTIONS

RKB
SPARING SOLUTIONS

SKF
AUTHORIZED DISTRIBUTOR
SPARING & REPAIRS

բօստ Նորանկախ պետականութիւն մը։

Սիմոն Վրացեան իր «Հայաստանի Հանրապետութիւն» արժեքաւոր աշխատութեան մէջ ձեռք բերուած անկախութիւնը փոխաբերական պատկերով մը այսպէս կը ներկայացնէ.

«... Ընդ հուր եւ ընդ սուր անցնելով՝ Հայաստանը կոչուեց անկախ պետական գոյութիւն։ Յնծութեան աղաղակներով ու ծափերով ընդունուեց Նրա անկախութիւնը։ Ընդհակառակը, շատերի համար Նա նկատոււմ էր դժբախտութիւն։ Հիւանդ երեխայ աշխարհ բերած մօր պէս, հայ ժողովուրդը գլուխ էր ծեծում սգաւոր եւ շշնջում ականջէին. «Դու իմ ուրախութիւնն ես, դու՝ դժբախտութիւնը իմ»...» [13]:

Հետեւաբար, Գուշակեանի «Գոհաբանական մաղթանք»-ը պետք է կարդալ ոչ միայն իբրեւ ծիսական աղօթք, այլեւ իր ժամանակի պատմական փորձառութեան վկայութիւն։ «Վերստին շնորհելով մեզ զժառանգութիւն Հայրենեաց մերոց» եւ «դարձեալ հաստատեալ ի Նմին զԱթոռ իշխանութեան Հայաստանեայցս» ձեւակերպումները կը մատնանշեն ազգային կեանքի այն խոր գիտակցութիւնը, որ դարերու պետականագուրկ գոյութենէն ետք հայրենիքն ու պետականութիւնը դարձեալ իրականութիւն դարձած էին։ Իսկ «Հի պահպանեսցէ զՀանրապետութիւն Ազգիս մերոյ» աղերսը կը բացայայտէ այդ վերականգնուած պետականութեան փխրու-նութիւնը եւ անոր պահպանման անհրաժէշտութիւնը։

Այս պատմական էնթաիոդին վրայ է, որ քարոզին մէջ հայրենիքի գաղափարը կը վերածուի ոչ միայն գոհաբանութեան արժանի նւթի, այլ առաւել եւս՝ ազգային պատասխանատուութեան։ Հանրապետութեան պահպանումը, հայրենիքի շինութիւնը, զինուորին գոհաբերութիւնը եւ ժողովուրդին բարոյական վերանորոգումը կը ներկայանան իբրեւ Նոյն պատմական առաքելութեան տարբեր երեսակները։

«Գոհաբանական մաղթանք»-ին բուն սիրտը կը կազմէ անոր վերջին եւ երկարաշունչ աղօթքը, զոր օրունա արարողապետը կամ եպիսկոպոսը կը բարձրաձայնէ եկեղեցւոյ բեմէն՝ սկսելով հանդիսաւոր սա խօսքերով. «Տէր Աստուած, փառաւորեալ լամենային...»։ Այս բաժինը պարզապէս ծիսական աղօթքի մը հերթական փուլը չէ, այլ Գուշակեան սրբազանին ինքնագիր ստեղծագործութիւններէն մէկը՝ իր մէջ խտացնող հոգեւոր խորք եւ գրական գեղեցկութիւն, ազգային յիշողութիւն եւ հայրենասիրական շունչ։ Թորգոմ արք. Գուշակեան գրաբարի հմուտ վարպետ մըն էր, լեզուի հնադարեան շեղորոքեան եւ ներքին երաժշտութեան խորապէս գիտակից ու անոր գեղեցկութեանը բիպացած նուիրեալ մը։ Անոր գրչին տակ գրաբարը կը դարդի պարզապէս անցեալի սեռած լեզու մը ըլլալ եւ կը վերածուի կենդանի աղօթական խօսքի, որուն մէջ սրբազանը, հայրենասիրականը եւ բանաստեղծականը կը միաձուլուին մէկ ամբողջութեան մէջ։

«Գոհաբանական աղօթք»-ը իր ծիսական կառուցուածքով կը բացուի Աստուծոյ փառաբանութեամբ եւ գոհութեամբ։ «Տէր Աստուած փառաւորեալ լամենային» հանդիսաւոր բացումը աղօթքը համայնքը կը կանգնեցնէ Աստուծոյ մեծութեան, սրբութեան եւ ամենակալութեան առջէ։ Աստուած կը ներկայացուի իբրեւ «սրբութիւն» եւ «պսակ հաւատացելոց», իսկ ամբողջ արարչութիւնը՝ Իր իշխանութեան եւ փառքին էնթալպա։ Այսպիսով՝ Հանրապետութեան համար կատարուող աղերսը ի սկզբանէ կը զետեղուի աստուածակեդրոն աշխարհայեացքի մը մէջ. պետական իշխանութեան աղբիւրը մարդը չէ, այլ Աստուած, որուն ձեռքին մէջ են «գօրութիւն եւ հարստութիւն» եւ որուն առջէւ «դողան ամենայն թագաւորք եւ ազգք»։

Թէեւ այս կոնսաքրոյ լեզուն բնական է հոգեւորականի մը համար, սակայն Գուշակեան արք.ի գոհաբանական այս աղօթքին մէջ կարելի է տեսնել Նաեւ իր ժամանակաշրջանի քաղաքական մտածողութեան արտացոլումը։ Աստուծոյ ամենակալութիւնը հաստատող ծիսական բառապաշարին ներքեւ կը զգացուի Նորաստեղծ Հանրապետութեան պետական իշխանութեան օրինականացման, ինքնիշխանութեան ամրապնդման եւ կենսունակ պետութիւն մը կերտելու հրամայականը։ «Մեծութիւն», «գօրութիւն», «յաղթութիւն» եւ «կարողութիւն» հասկացութիւնները, այս իմաստով, կը դառնան ոչ միայն աստուածային ստորոգելիներ, այլ Նաեւ այն քաղաքական արժէքներուն գաղափարական շրջանակը, որոնց վրայ պետք էր խաբխուէր Նորաստեղծ հայկական պետութիւնը։ Այսպիսով՝ ծիսական լեզուին տակ սրբազանին աղօթքը Նաեւ Հանրապետութեան քաղաքական գոյութեան եւ ազգային ինքնիշխանութեան գաղափարական հիմնաւորումն է։

Այս տեսանկիւնէ՝ աղօթքին սկզբնամասը միայն աստուածային ամենակալութեան փառաբանութիւնն չէ, այլ ան կը ստեղծէ այն արժեհամակարգը, որուն մէջ Հանրապետութիւնը պետք է գոյատեւէ իբրեւ օրինական իշխանութիւն, ազգային ինքնութեան քաղաքական արտայայտութիւն եւ ժողովուրդի անվտանգութեան ու ապագայի երաշխիք։ Աստուծոյ իշխանութեան մասին խօսող ծիսական լեզուին ներքեւ կը զգացուի Նորաստեղծ պետութեան մը ամրապնդման հրամայականը՝ իշխանութեան, կարողութեան, յաղթանակ եւ պատասխանատու կառավարում ունենալու անհրաժէշտութիւնը։

Այս կոնսաշունչ հաստատումէն ետք աղօթքը կը մտնէ իր պատմական յիշողութեան փուլը։ Ժողովուրդը, իբրեւ «ծառայք» եւ «որդիք ծառայիցն», կը ներկայանալ Աստուծոյ առջէ՝ «յաւուր ցնծութեան եւ յիշատակ ազատութեան Ազգիս Հայոց եւ հաստատութեան Աթոռոյ Հանրապետութեան Հայաստանեայց»։ Այստեղ ներկայ տօնական պահը կը կապուի անցեալի տառապանքին ու Նահատակութեան հետ։ Հայոց ազատութիւնը կը մեկնաբանուի իբրեւ Աստուծոյ ողորմած «այցելութիւն»՝ բազմապատիկ Նահատակութեանց գնով ձեռք բերուած փրկութիւն։ Հետեւաբար գոհաբանութիւնը միայն ուրախութեան արտայայտութիւն չէ, այլ Նաեւ Նահատակներու յիշատակի եւ Աստուծոյ Նախախնամութեան նկատմամբ հաւատքի ծիսական յայտարարութիւն։

Աղօթքին յաջորդ փուլը պատմական յիշողութեան եկեղեցաբանական ընդլայնումն է։ Գուշակեան արք. ներկայ Հանրապետութիւնը կը տեղադրէ հայոց սրբազան պատմութեան երկար շղթային մէջ՝ յիշատակելով Մակաբայեցիները, առաքեալներու քարոզութիւնը, Ս. Գրիգոր Լուսավորիչը, Ներսէսն ու Սահակը, Մեսրոպ Մաշտոցը, Վարդանանցն ու Դեռնդեանցը, ապա՝ հայոց թագաւորներն ու իշխանները։ Այս յիշատակարանը պատահական անուններու շարան մը չէ, այլ ան կը ստեղծէ պատմական եւ եկեղեցական յիշատակի ամբողջութիւն մը, ուր հաւատքը, հայրենիքը, մշակոյթը եւ պետականութիւնը կը ներկայանան իբրեւ փոխկապակցուած ժառանգութիւն։

Այս պատմական շարունակականութեան գազաթնակետին կը դրուի ժամանակակից հետրադիւնը։ Նախկին սերունդներու սրբազան պայքարին կողքին կը յիշատակուին «արս ընտիրս», որոնք «զեռանդն հաւատոցս ընդ սիրոյ Հայրենեացն միաւորեալ»՝ իրենց կեանքը նուիրած են պատերազմի՝ հայոց ազգի եւ հայրենիքի պաշտպանութեան համար։ Այս ձեւակերպումով՝ հայրենասիրութիւնը պարզ աշխարհիկ զգացում մը չէ, այլ կը միահիւսուի հաւատքին հետ՝ կոչելով սրբազան ուխտի մը ընդոյթ։ Այնուհետեւ աղօթքը կը վերածուի ուղղակի աղերսի Հանրապետութեան համար։ «զՀանրապետութիւն Ազգիս անասան պահեա» խնդրանքին կը յաջորդեն երկրի դէկավար այրերուն իմաստութեան, զօրավարներուն եւ զօրքերուն՝ «հոգիի արութեան», իսկ ամբողջ ժողովուրդին համար՝ սրբութեան, զգօնութեան, իմաստութեան, խրատի եւ օրինապահութեան խնդրանքները։ Այլ կառուցւածքը կարելու է, որովհետեւ Գուշակեան սրբազանին համար Հանրապետութեան ամրութիւնը միայն զինուորական ուժով կամ իշխանութեան կարողութեամբ պայմանաւորուած չէ. անոր հիմքը Նաեւ ժողովուրդի բարոյական եւ հոգեւոր նկարագիրն է։

Աղօթքին մէջ առանձնապատուկ տեղ կը գրաւէ որբերուն եւ անտէրունչ մանուկներուն համար կատարուած աղերսը։ Այստեղ պատմական ողբերգութիւնը կը ստանայ

անձնական եւ մարդկային դէմ։ «Բիւրք բիւրոց» որբացած մանուկներու յիշատակը կը կապուի Բեթլեհեմի անմեղ մանուկներուն հետ, եւ անոնց ծնողներուն կորուստը կը ներկայացուի իբրեւ ազգային ողբերգութեան սրբազան յիշատակ։ Աղօթքը կը խնդրէ, որ Աստուած անոնց դարձեալ հայրենիք բերէ՝ «ընդ հովանեաւ հաչի քո սրբոյ»։ Այսպիսով՝ հայրենիքի վերականգնումը այստեղ կը ստանալ Նաեւ ապաստան, տուն եւ ընտանիք վերականգնելու գոյութենական նշանակութիւն։

Ձաջորդաբար կը սկսի օրինութեան ծիսական լայն շրջանակ մը՝ ժողովուրդին, ազգին, եկեղեցւոյ, հայրենի աշխարհին եւ անոր բոլոր սրբավայրերուն համար։ Իսկ դրօշի օրինութիւնը աղօթքին մէջ կը ստեղծէ բացառիկ խորհրդանշական պահ մը։ Գուշակեան արք. հայկական դրօշը կը համեմատէ Նոյի օրերու ջրիեղեղէն ետք ամպերուն մէջ երեւցած ծիածանին հետ՝ իբրեւ Աստուծոյ ու մարդուն միջեւ ուխտի նշան։ Այսպիսով՝ արեան «հեղեղներէն» ետք բարձրացած դրօշը կը դառնայ հայ ժողովուրդին եւ Աստուծոյ միջեւ Նորգուած ուխտի խորհրդանիշ։ Դրօշը, հետեւաբար, սոսկ պետական խորհրդանիշ չէ, այլ անոր կը հաղորդուի սրբազան ուխտի, յաղթութեան անխորտակելի նշանի եւ անալլայելի ինքնութեան նշանակութիւն։

Աղօթքին յաջորդող հայրենիքի օրինութիւնը Նոյն խորհրդաբանութիւնը կը շարունակէ։ Հայաստանը կը ներկայացուի որպէս Աստուծոյ կողմէ շնորհուած եւ կրկին ծաղկելու համար սահմանուած երկիր։ Յատկապէս ուշագրաւ է «զկոչումս իւր գլխովին, զանուղ ՔԱՅԱՍՏԱՆ» արտայայտութիւնը, որուն յաջորդող հանդիսաւոր բացագանչութիւնը՝ «ՔԱՅԱՍՏԱՆԴ անուն ցանկալի», աղօթքը կը բարձրացնէ գրեթէ միջնադարեան շարականի մը բանաստեղծութեան մակարդակին։ Այստեղ հայրենիքի անունը ինքնին կը դառնայ յիշողութեան, կարօտի, ապագայի եւ ազգային միութեան խորհրդանիշ։

Ի դէպ պետք չէ մոռնալ, որ, աստուածաշնչական աւանդութեան համաձայն, Դրախտը կը տեղադրուի հայկական բնաշխարհին հետ աննչուող աշխարհագրական տարածքին մէջ (Շննդոց Բ. 8-14)։ Հաւանաբար այս հնագոյն ընկալումին արձագանքն է Նաեւ այն, որ մեր հայրերը Հայաստանը անուանած են «երկիր դրախտավայր» եւ «մարդկային ցեղին օրրան»՝ առնչելով զայն ջրիեղեղի եւ Արարատ լեռան շնորհիւ Նոյեան տապանի փրկութեան պատմութեան հետ։ Այս սրբազան պատմիբացումը իր առանձնակի անդրադարձը կը գտնէ Գուշակեան սրբազանին գոհաբանական աղօթքին մէջ, ուր հայրենի երկիրը կը ներկայանալ ոչ միայն իբրեւ Նախնեաց ժառանգութիւն, այլ Նաեւ որպէս աստուածային օրինութեան եւ բարութեան վայրը։ Դիմելով առ Աստուած՝ ան կը հայցէ. «Օրինեա՛, Տէր, եւ զաշխարի մեր եւ գերկիր հայրենի, զի յորում գառաշինն հաստատեցեր գտելոյ դրախտին երանութեան [...] քառախուլով վտակացն պարարտութեամբ վերստին ծաղկազարդեալ պայծառացի ի վայելումս ամենայն բարութեանց երկնաւորաց»։

Աղօթքին վերջին մեծ պատկերներէն մէկը սուրբ Եկեղեցւոյ անձնաւորումն է՝ «Մայրոյ մեր սուրբ Եկեղեցիդ Հայաստանեայց»։ Եկեղեցին կը ներկայացուի իբրեւ մայր, որ դարձը շարունակ իր գիրկը պահած է ժողովուրդը, սնած է «սուրբ Աւետարանին» կաթով եւ պահպանած է Նախնեաց յիշատակներն ու ազգային բաղձնընէրը։ Այժմ անոր կը հրամցուի ցնծալ, սգոյ ջոռը վերցնել եւ դուրս գալ ընդառաջ Եկած «փեսային»։ Այս հարաբնեկան եւ աւետարանական պատկերներու փոխաբերութեամբ Հանրապետութեան վերականգնումը կը ստանալ ուրախութեան եւ վերածնունդի ծիսական խորհուրդ։

Եւ, վերջապէս, աղօթքը կը դադրի միայն Աստուծոյ ուղղուած աղերս ըլլալէ եւ կը վերածուի ժողովուրդին ուղղուած հանդիսաւոր կոչի. «Եւ դուք ժողովուրդ Հայոց, որոիք Հայկեան եւ որդեգրեալք եկեղեցւոյս Հայաստանեայց, առէք զսպառազնիւթիւնսն հաւաւտոյդ... արի՛ք, ընդ առաջ»։ Այս վերջին պատգամով Գուշակեան արք. ժողովուրդը կը վերադարձնէ պատմութեան բեմ՝ զինուած ոչ միայն ֆիզիքական զենքով, այլ Նաեւ հաւատքի գրահանդերձով եւ յոյսի սաղաւարտով։ Այսպիսով՝ աղօթքը կը հասնի իր գագաթնակետին՝ գոհաբանութիւնը վերանցելով կոչի, իսկ ազատութիւնը՝ պարտաւորութեան։

Այս բոլորը նկատի ունենալով՝ Թորգոմ արք. Գուշակեանի «Գոհաբանական մաղթանք վասն Հանրապետութեան ազգիս հայոց»-ը կարելի չէ գնահատել միայն իբրեւ իր ժամանակին համար յօրինւած ծիսական աղօթք մը։ Ան Նաեւ սրբազանին հոգեւոր նկարագիրին, ազգային գիտակցութեան եւ անսահման հայրենասիրութեան կենդանի արտայայտութիւնն է։ Անբասիր կոնսււորի մը կենսքը, որ իր ամբողջ էութեամբ նուիրուեցաւ Հայաստանեայց եկեղեցւոյ եւ հայ ժողովուրդի ծառայութեան, այստեղ կը ներկայանալ իբրեւ աղօթքի վերածնուած ազգային վկայութիւն։ Գուշակեան արք. այն հոգեւորականներէն էր, որոնց համար Եկեղեցւոյ ծառայութիւնը չէր սահմանափակուեր միայն խորանին եւ սրբազան արարողութիւններուն մէջ, այլ Նաեւ կ'ընդգրկէր Նաեւ ազգին ցաւը, հայրենիքի ճակատագիրը, ժողովուրդի ապագան եւ ազգային արժանապատուութեան պահպանումը։

Իր յօժարական ու անգնահատելի ծառայութիւններով, իր երկարամեյա նուիրումով եւ, մանաւանդ, իր բռուն ու անկեղծ հայրենասիրութեամբ Թորգոմ սրբազան իր անունը կ'ապցէ հայ ժողովուրդի այն սերունդին հետ, որ պետականութեան վերականգնումը ընդունեց ոչ իբրեւ քաղաքական պատահական իրադարձութիւն մը, այլ պատմութեան երկարատեւ գովանքներէն ետք վերստին շնորհուած սրբազան ժառանգութիւն։ «Գոհաբանական մաղթանք»-ին մէջ անոր ծայրը կը հնչէ այդ խոր համոզումով. հայրենիքը պարգեւ մըն է, Հանրապետութիւնը՝ սրբութեամբ պահպանուե-

լիք ազգային գերագոյն արժեք մը, զինուորին գոհաբերութիւնը՝ սըրբազան պարտք մը, իսկ ժողովուրդին սերն ու բարի գործերը՝ անկախութեան իրական երաշխիքը։

Եւ հոս է, թերեւս, Գուշակեան արքեպիսկոպոսի ստեղծագործութեան ամենէն մնայուն պատգամը։ Ան ապրած է Հանրապետութեան մը վերականգնման պատմական պահը, բայց իր խօսքը չի սահմանափակուիր այդ մէկ ժամանակաշրջանով։ Անոր աղօթքը այսօր ալ կը հասնի մեզի՝ որպէս անցեալէն եկող ազգային խղճի ձայն ու սրտի խորքերէն հնչող արեան կանչ։ Այդ ձայնին մէջ կը միանան խոր հաւատքը, անշեղ եկեղեցասիրութիւնը եւ հայրենիքի հանդէպ բռուն սերը՝ կազմելով հոգեւորականի մը այն վեհ կերպարը, որ իր ժողովուրդին ծառայութիւնը ապրեցաւ իբրեւ կոչում, իսկ հայրենիքին հանդէպ իր սերը՝ իբրեւ սրբազան պարտաւորութիւն։ Ուստի Թորգոմ արք. Գուշակեանի «Գոհաբանական մաղթանք»-ը կը մնալ ոչ միայն իր դարաշրջանի պարճախօս վկայութիւնը, այլ Նաեւ հայ հոգեւորականութեան ազգային առաքելութեան արժեքաւոր յուշարձաններէն մէկը՝ գրուած աղօթքի լեզուով, բայց ողբշնչուած հայրենիքի անսպառ սիրով։

Երջանկայիշատակ Թորգոմ արք. Գուշակեանի հեղինակած «Գոհաբանական մաղթանք»-ը պատգամ մըն է Նաեւ մեզի եւ գաւլից հայ սերունդներուն։ Այսօր, հոգեւին եւ արդար հպարտութեամբ, կը նշենք Հայաստանի Հանրապետութեան 35-ամեակը՝ գիտակցելով, որ անկախութիւնը դիրին ժառանգութիւն մը չէ։ Ինչպէս 1918 թուականի Ա. Հանրապետութիւնը, այնպէս ալ ներկայ Հանրապետութիւնը իր գոյութեան ճանապարհը անցած է պատմութեամբ, զոհողութիւններու եւ մահու-կենեւ մաքառումներու ընդմէջէն։ Ուստի առկալ հանրապետական մաղթանքին ու անոր աղօթքներուն ընդմէջէն հաղորդուող պատգամը այսօր կը հնչէ առանձնայատուկ ուժգնութեամբ. հայրենիքը սիրել՝ կը նշանակէ զայն սիրել «ամենայն սրտէ քումմէ, եւ ամենայն անձնէ քումմէ, եւ ամենայն մտաց քոց» (Մտթ. ԻԲ., 37). որովհետեւ հայրենասիրութիւնը լոկ զգացում մը չէ, այլ՝ ուխտ, յանձնառութիւն եւ պատասխանատուութիւն՝ պահպանելու, շէնցնելու եւ հզօրացնելու այն սըրբազան ժառանգութիւնը, որ դարերու տառապանքէն, թափուած ծով արիւնէն եւ միլիոնաւոր հայորդիներու զոհաբերութենէն մեզի հասած է։ Եւ թերեւս հոս է «Գոհաբանական մաղթանք»-ին ամենէն այժմեական պատգամը՝ անկախութիւնը միայն տօնելի իրողութիւն չէ, այլ հայրենիքին հանդէպ ամեն սերունդի վերանորոգելի ուխտը. երկնուան սերունդներուն արիւնով կերտուած պետականութիւնը այսօրուան եւ վաղուան սերունդներուն կը վստահուի՝ զայն հաւատարմութեամբ պահելու, Նոր կենսքով ծաղկեցնելու եւ արժանաւայելի ձեռքբերումներով ու բարի գործերով անոր խաղաղ յառաջընթացը ապահովելու համար։

ԴՊԿՏ. ԱՔԷԼ ԶԵՆՏ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ժընեւ, 19 սեպտեմբեր 2026

Հայաստանի Հանրապետութեան անկախութեան տօնին ընդառաջ

[1] Թորգոմ արք. Գուշակեան ծնած է Պարտիզակ 14 սեպտ. 1874-ին։ Նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն Ներսէ-Շուշանեան ազգ. վարժարանին մէջ եւ զայն աւարտած 1890-ին։ Նոյն տարին ընդունուած է Արմաշի դպրեակնքը, զոր աւարտելէ ետք 1896-ին կը ձեռնադրուի կուսակոս բախանայ՝ ձեռամբ Սաղաքիա արք. Օրմանեանի։ 1906-ին կը նշանակուի լիազօր փոխվանահայր եւ տեսուչ Արմաշի դպրեականքին՝ յաջորդելով Եղիշէ արք. Դուրեանի։ 1907-ին կ'ընտրուի առաջնորդ Սեբաստիոյ։ 19 սեպտ. 1910-ին Էջմիածնի Մայր տաճարին մէջ եպիսկոպոս կը ձեռնադրուի՝ ձեռամբ Սատրեոս Բ. Իզմիրեան կաթողիկոսին։ 28 յունիս 1914-ին կ'ընտրուի առաջնորդ Եգիպտոսի հայութեան։ 6 յունիս 1931-ին կ'ընտրուի Երուսաղէմի պատրիարք. պատափառնատու պաշտօն մը, որ կը վարէ մինչեւ իր մահը՝ 10 փետր. 1939 թուական։ Երջանկայիշատակ Տ. Թորգոմ արք. Գուշակեան եղած է մին Հայ եկեղեցւոյ արի եւ անվկանդ հովուապետերէն եւ հայ ժողովուրդի ազնուական ու բազմաշնորհ զաւակներէն։

[2] Տե՛ս Յակոբեան, Պիոն, «Էջմիածինը եւ Արեւելեան Հայաստանի ազատագրումը», «Էջմիածին», 1978, էջ 71։

[3] Տե՛ս «Փիղը աղօթքի սակս ըստ արժանոյն հանդիսի Տօնեցեցոյն ի մէջ» Տօնից Թագաւորականաց։ Կարգաւորեալ եւ շարարդեալ ի Մեծ Դոգելոյս Հայրապետէ՝ Տեառն Սիմեօնէ Սրբազնասուրբ Կաթօղիկոսէ ամենայնի Հայոց. Սրբոյ եւ մեծի Աթոռոյն Էջմիածնի։ Յամի Տեառն 1771 Յուլիսի 10», Նոր Նախիջեան, 1794։

[4] Տե՛ս Նոյն տեղը, էջ 5։

[5] Տե՛ս Եզեանց, Կարապետ, «Ս. Էջմիածնի Մայր աթոռի եւ ռուսաց կառավարութեան յարաբերութիւնների ծագումը», «Լոււմպ», տպ. Ա. Զուրաբեւաձէի, Թիֆլիս, 1904, էջ 10։

[6] Տե՛ս «Գոհաբանական մաղթանք Հայաստանի Հանրապետութեան համար», Անթիլիաս, 2020։

[7] Տե՛ս «Բազի, ամազգիր գրականութեան եւ արուեստի», Է. տարի, թիւ 5-6, Պէրլուք, 1968, էջ 76-77։

[

ՄԻՆՉ ՈՒՎԵՏԻՆԿԹԸՆ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼԵԻ ՄԵՋ ԻՐ ԲԱՂԱՔԱՅԻՆԵՐԸ ՉԳՈՒՇԱՑՈՒՑ

ԹՐԱՄՓ ԱՐՉԱԿՈՒՐԴԸ ԱՆԱԿՆԿԱԼ ԿԵՐՊՈՎ ԿՐՃԱՏԵԼՈՎ ՎԵՐԱԳԱՐՉԱԻ ՍՊԻՏԱԿ ՏՈՒՆ



Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըլտ Թրամփ Մերիլանտ Նահանգի Զեմի Տեյվիտի հանգըստեան վայրին մէջ իր շաբաթավերջի արծակուրդը անակնկալ կերպով կրճատեց ու շաբաթ երեկոյեան վերադարձաւ Սպիտակ տուն, առանց որ անոր վարչակազմը անոր ժամանակացոյցի այս անակնկալ փոփոխութեան համար որեւէ բացատրութիւն տայ:

Թրամփ այս քայլը առաւ, մինչ Միջին Արեւելքի մէջ լարուածութիւնը մազլցում արձանագրեց. սեուտական ղեկավարութեամբ զինուորական դաշինքը յայտարարեց, թէ հուսիները շաբաթ արշալոյսին հեռահար հրթիռ մը արձակած են մայրաքաղաք Ռիատի ուղղութեամբ, որմէ ետք անոր միջազգային Նաւահանգիստին մօտ ԱՐՎՄԶՕ ընկերութեան վառելանիւթի պահեստանոցին մէջ հրդեհ յառաջացաւ, թէւ դաշինքը Նշեց, որ վստահգործած է հրթիռը:

Դաշինքը Նաեւ հաղորդեց, որ հուսիները փորձած են քաղաքային ենթակառոյցներ թիրախաւորել Կարմիր ծովուն եզերքը գտնուող Երևագի քաղաքին մէջ, ուր կը գտնուի սեուտական քարիւղի խողովակաշարի ծայրամասը: Անոնք Նաեւ թիրախաւորած են Թաեֆ, Պէշ Եւ Ֆրսան քաղաքները:

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց Նախարարութիւնը, վերոնշեալ զարգացումներուն լոյսին տակ բարձրացուց շրջանին մէջ իր քաղաքացիներուն համար ապահովական ազդարարութիւնը՝ զգուշացնելով «ապահովական բարդ միջավայրէ, որ չսպասուած մազլցումներու հաւանականութիւն կը պարունակէ»:

Նախարարութիւնը կիրակի կանուխ առաւօտուն «Էքս»-ի վրայ տեղադրուած շրջաբերականի մը մէջ Միջին Արեւելքի մէջ բնակող ամերիկացիներուն կոչ ուղղեց՝ ցուցաբերելու բարձր զգոնութիւն եւ պատրաստ ըլլալու թռիչքներու հաւանական ջնջումներու, օդային տարածքի փակման եւ ճամբորդութեան խափանութեամբ: Անկկա Նաեւ շրջանէն դուրս գտնուողներուն կոչ ուղղեց՝ լոջօրէն վերատեսութեան ենթարկելու շրջան կամ շրջանի ճամբով ճամբորդելու որեւէ ծրագիր:

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԲԱՆԱԿԸ ԱՒԵԼՑՈՒՑԱԾ Է ԿԱԶԱՅԻ, ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԵՋ ԻՐ ՆԵՐԿԱՅՈՒԹԻՒՆԸ

Իսրայէլեան բանակը լրացուցիչ ուժեր ուղարկած է Կազա, Լիբանան, Սուրիա եւ Այսորորդանան՝ 20 սեպտեմբերի երեկոյեան սկսած հրեական Եոմ-Զիփուր (Քաութեան օր) տօնի ընթացքին անվճռանգութիւնը ապահովելու համար: Այս մասին կը հաղորդէ իսրայէլեան պետական պատկերասփիւռի կայանը:

Իսրայէլեան բանակէն կայանին զրուցակիցը յայտարարած է. «Մենք պատրաստ ենք բոլոր ճակատներուն վրայ, ներառեալ Իրանի ճակատը, եւ միշտ պատրաստ ենք զինադադարէն անցնելու մարտական գործողութիւններու վերսկսման՝ թէ՛ պաշտպանութեան մէջ, թէ՛ ալ յարձակման մէջ: Եթէ Նոյնիսկ մեզի անակնկալի բերեն, մենք պիտի չպարտուինք»:

Պատկերասփիւռի կայանին աղբիւրը Նշած է, որ իսրայէլեան բանակը ունի անյապաղ գործողութիւններ կատարելու հրահանգներ, ինչպէս Նաեւ երկարատեւ արշաւի ծրագիրներ:

ՌԻՏԱՅԻ «ԱՄԵՐԻԿԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՈՐԵՒԷ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԿՍԵԼՈՒ ԻՐԱՆԵԱՆ 7 ՊԱՅՄԱՆՆԵՐ ՓՈԽԱՆՑՈՒԵՑԱՆ»

Իրանի Ազգային անվտանգութեան գերագոյն խորհուրդի քարտուղար հազարապետ-գորավար Մուխեմ Ռիտայի յայտարարեց. «Ամերիկեան կառավարութեան որեւէ բանակցութիւն սկսելու իրանեան եօթը պայմաններ փոխանցուցան»:

«Թերիանի պատգամը յստակ է եւ աներկբայելի. եթէ Ուաշինկթըն կ'ուզէ ինքզինք մատնած նեղ կացութենէն դուրս բերել եւ ատոր մէջ աւելի չներքաշիլ, ապա անոր առջեւ միայն Իրանի իրաւունքներն ու պայմանները ընդունելու ուղին գոյութիւն ունի», շեշտեց Ռիտայի:

Իրանի խորհրդարանի Նախագահ Մուհամեդ Պաղեր Ղալիպաֆ Նշեց. «Իրանցի ժողովուրդի դիմադրութիւնը միայն Իրանի անվտանգութիւնը չ'երաշխաւորեր, այլ շրջանին ու աշխարհի վրայ նոր համակարգ ստեղծելով պիտի յանգեցնէ տնտեսական եւ ռազմավարական ոլորտներու մէջ դրական զարգացումներու»:

«Ժողովուրդի արժեքաւոր ու պատմական դիմացկունութիւնը Իրանը պիտի բարձրացնէ ուժի եւ քաղաւաճման նոր մակարդակներու», ըսաւ ան:

«Մեր կարծիքով, պատերազմ կամ բանակցութիւն երկընտրանքը իսկական չէ, այլ պէտք է միեւնոյն ժամանակ պա-

տերազմ մղել եւ բանակցիլ: Պէտք է իմաստուն ու կարող կերպով պատեռազմիք, եւ պատշաճ պահուն իմաստութեամբ ու կարողութեամբ բանակցիւք», յայտնեց Իրանի խորհրդարանի Նախագահը:

«Դիւանագիտական գետնի վրայ մեր դիրքորոշումը շատ յստակ ու տրամաբանական է, եւ ոչ բանակցելի: Հակառակորդ կողմին՝ Ամերիկային միջնորդներու ճամբով յստակ կերպով փոխանցուեցան մեր պատգամներն ու պայմանները: Թշնամին լաւ գիտէ, թէ խաբէութեան ու միակողմանի պարտադրանքի ճամբան փակ է, եւ եթէ այս պայմանները, իրանցի ժողովուրդի օրինական իրաւունքները չճանչցուն եւ ամերիկեան խոստումները չկատարւին, բանակցութեան Նախկին պայմաններուն վերադառնալու կամ Հորմուզի Նեղուցի վերաքաջման առիթ պիտի չըլլայ», յայտարարեց Ղալիպաֆ:

Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըլտ Թրամփ «Փոք Նիուզ»-ի հետ զրոյցի ընթացքին յայտնեց, որ այս շաբաթ ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի ծիրին մէջ Իրանի Նախագահ Մետու Փեզէշքիանի հետ հանդիպումի մը զարգիւթարին նկատմամբ դրական տրամադրուած է, «եւ ես որոշում տալու դիրքի վրայ եմ, եւ մօտիկ ապագային Իրանի վերաբերեալ շատ մեծ բաներ պիտի պատահին»:

ԿՐԻՆԼԱՆՏՆ ՈՒ ԴԱՆԻԱՆ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՀԵՏ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆ ՊԻՏԻ ՍՏՈՐԱԳՐԵՆ

Դանիոյ վարչապետ Մեթթէ Ֆրետե-րիքսէն յայտարարեց, թէ կը Նախատեսուի, որ այս շաբաթ Կրիւլանտ ու Դանիան Միացեալ Նահանգներու հետ կլնքեն համաձայնութիւն մը՝ ամրապնդելու համար Հիւսիսային Բեւեռի եւ Ատլանտեան ովկիանոսի հիւսիսին մէջ անվտանգութիւնը:

Ֆրետերիքսէն հաղորդագրութիւն մը իրապարակելով յայտնեց. «Ուրախ եմ յայտնելու, որ Կրիւլանտի, Դանիոյ եւ Միացեալ Նահանգներու համար լաւ համաձայնութեան հասնելու կարելիութիւն գոյութիւն ունի»:

Ան աւելցուց, որ համաձայնութիւնը պիտի ստորագրուի Նիւ Եորքի մէջ ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովի ծիրին մէջ:

Միացեալ Նահանգներու արտաքին գործոց Նախարարութիւնը իր կարգին յայտնեց, որ Միացեալ Նահանգներն ու Դանիան գոյացուցած են Կրիւլանտի վերաբերեալ ապահովական համաձայնութիւն մը, որ կ'երաշխաւորէ, որ Հիւսսատանն ու Ռուսիան չկարենան բեւեռային կղզիին վրայ ռազմակայաններ հաստատել:

Նախարարութենէն պաշտօնատար մը շեշտեց. «Համաձայնութիւնը Միացեալ Նահանգներուն յստակօրէն կ'երաշխաւորէ ամերիկեան ցամաքամասը անվտանգ դարձնելու եւ զայն պաշտպանելու համար Կրիւլանտի մէջ իր անհրաժեշտ նկատած քայլը առնելու,

ներառեալ տեւական հասանելիութեան իրաւունք, ռազմակայաններու ստեղծում եւ օդային տարածքին մէջ թռիչքներ»:

«Համաձայնութիւնը կ'երաշխաւորէ, որ Չինաստանն ու Ռուսիան պիտի չկանխեն Կրիւլանտի մէջ ռազմակայաններ ստեղծել կամ այդտեղ ուժեր ուղարկել, ինչպէս Նաեւ կ'ապահովէ **մեքսիկմներ**՝ զգայուն ոլորտներու մէջ ներդրումը արգիլելու համար», աւելցուց պաշտօնատարը:

Ֆրանսայի Նախագահ Էմանուէլ Մաքրոն շեշտեց, որ Միացեալ Նահանգներու, Դանիոյ եւ Կրիւլանտի իշխանութիւններուն միջեւ համաձայնութիւնը «կը Նպաստէ կացութեան հանդարտեցման» եւ կղզիին վրայ «դանիական գերիշխանութեան վերահաստատման»:

«Կը բաւարարուիմ ըսելով, որ Դանիոյ գերիշխանութիւնը յարգուեցաւ, եւ միջազգային օրէնքը յարգուեցաւ, եւ մեր ուզածը այդ էր, ուստի ասիկա լաւ բան է», Նշեց Մաքրոն:

Միացեալ Նահանգներու Նախագահ Տանըլտ Թրամփ Նախապէս յայտարարած էր, թէ գոյացած համաձայնութիւնը Միացեալ Նահանգներուն կղզիին անվտանգութեան վրայ՝ տեւական վերահսկողութիւն» կը տրամադրէ եւ Ռուսիոյ ու Չինաստանին կ'արգիլէ դանիական այդ շրջանին մէջ ռազմակայաններ ստեղծել:

ԿԱԼՈՒՋԻՆ. «ԵՐԵՒԱՆ ԿԸ ՓՈՐՁԷ ՎՆԱՍԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ ՌՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹԵԱՆ»

Հայաստանի մէջ Ռուսիոյ տնտեսական ընկերութիւններու շահերու ոտնահարումը պիտի չմնայ առանց ռուսական կողմի պատշաճ արձագանգին, յայտարարեց Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարարի տեղակալ Միխայիլ Կալուզին:

«Հայաստան յայտարարած է, թէ հայրենական (ռուսական) ներդրումներուն հանրապետութեան մէջ ոչինչ կը սպառնայ, բայց յայտարարութիւնները միշտ եւ ամէն բանի մէջ չէ, որ կը համընկնին իրականութեան», ԹԱՄՍ-ի համաձայն՝ յայտարարեց Կալուզին:

Այս մասին խօսեցաւ Նաեւ Ռուսիոյ Ապահովութեան խորհուրդի փոխքարտուղար Վլէքսէյ Շեւցով, որ յայտարարեց, թէ Հայաստանի իշխանութիւնները կ'ուզեն արժեգրելէ ռուսական ընկերութիւններն ու անոնց շահերը՝ ստիպելու համար սեփականատերերը ձեռքազատուելու անոնցմէ:

«Նկատած ենք Նախանշաններ, որ յաջորդ թիրախները կրնան դառնալ Հայաստանի մէջ ռուսական արդիւնաբերական եւ ենթակառուցումքային ձեռնարկութիւնները», դիտել տուաւ Շեւցով՝ առանց յստակ անուններ տալու:

Անոր համաձայն, «շրջանառութեան մէջ կը դրուին թէգէր անոնց անբաւարար ֆինանսաւորման, ներդրումային մթնոլորտին վրայ քացաւասական ազդեցութեան, անոնց գործունեութեան բնապահպա-

նական վնասին, աշխատակիցներու ցած աշխատավարձին մասին»:

Նման մարտավարութիւնը, Շեւցովի համաձայն, «պիտի դառնայ յաւելեալ «կրակոց» հայաստանեան տնտեսութեան վրայ՝ նկատի առնելով, որ «ռուսական գործարարութիւնը տասնեակ հազարաւոր աշխատատեղեր ստեղծած է եւ արդիւնաւետ կը կառավարէ իր գործունեութիւնը՝ օրինական հիմքերու վրայ նշանակալի ներդրում ունենալով Հայաստանի համախառն ներքին արդիւնաբերութեան մէջ»:

Կալուզին Նաեւ անդրադարձաւ այն երեսյթին, որ երկարթուրդի հարցով իրականութիւնը երեւանի յայտարարութիւններուն հակառակն է, եւ՝ «ռուսական ընկերութիւնը շատ տարիներ իր եկամուտները պիտի ներդնէ հայկական երկաթուղային ենթակառուցումքի աջակցութեան, արդիականացման եւ զարգացման գործին մէջ»:

Հայաստանի մէջ ռուսական մեծագոյն ընկերութիւններէն է «Կազպիթում-Արմենիա»-ն, որուն շուրջ, սակայն, ներկայիս գոնէ հրապարակային բանավեճ չկայ: Ընկերութեան հայաստանեան վերլուծական եւ այլ շրջանակներ կ'անդրադառնան հիմնականին մէջ Հայաստանի համար բնական կազի շուկայական սակ աւանմանելու՝ Ռուսիայէն պարբերաբար ինչող սպառնալիքներուն:

ԱՐՅԱԽԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ. «ԱՐՅԱԽՅԻՆԵՐԻ ՀԱՒԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՆՎՏԱՆԳ ՎԵՐԱԳԱՐՁԻ ԻՐԱՒՈՒՆՔՆ ԱՆՍԱԿԱՐԿԵԼԻ Է»

Արցախի Հանրապետութեան Ազգային ժողովի Նախագահի պարտականութիւնները կատարող Գազիկ Բաղունց 19 սեպտեմբերին հետեւեալ յայտարարութիւնը հրապարակեց՝ Արցախի ժողովուրդին դէմ ագրայեճանական ռազմական Նախայարձակումին եւ բռնի տեղահանութեան երրորդ տարեկիցին առիթով.

Երեք տարի առաջ այս օրը՝ 2023 թուականի սեպտեմբերի 19-ին, Ագրայեճանը, խախտելով միջազգային իրաւունքի բոլոր կանոններն ու 2020 թուականի եռակողմ յայտարարութեամբ ստանձնած պարտաւորութիւնները, լայնածաւալ ռազմական Նախայարձակում սանձադեղծեց աւելի քան իննամսեայ շրջափական հետեւանքով հիւժուած Արցախի Հանրապետութեան դէմ:

Այդ ռազմական յանցագործութիւնը, որն ուղեկցուեց քաղաքացիական ենթակառուցումքների թիրախաւորմամբ եւ խաղաղ բնակչութեան սպանութիւններով, դարձաւ Արցախի հազարամեայ բնիկ ժողովրդի դէմ Նախապէս ծրագրուած ցեղային զտման եւ ցեղասպան քաղաքականութեան զագաթնակէտը: Միջազգային հանրութեան լռութեան եւ գործուն **մեքանիզմների** բացակայութեան պայմաններում աւելի քան 120 հազար արցախցիներ ստիպուած եղան լքել իրենց պատմական հայրենիքը՝ փրկուելու ֆիզիքական բնաշնչումից:

Այս ողբերգական օրը մեր խոնարհումն ենք բերում յաւուն հայրենիքի պաշտպանութեան իրենց կենսքը զոհաբերած բոլոր Նահատակների պայծառ յիշատակի առջեւ: Արանց սխրանքն ու անձնագոհութիւնը մեր ժողովրդի պատուի եւ արժանապատուութեան յաւերժական վկայութիւնն են:

Անցած երեք տարիները չեն Նսեմացրել եւ չեն կարող Նսեմացնել մեր բնակչութեան իրաւունքները եւ դրանք պաշտպանելու մեր յանձնառութիւնը: Ուստի՝ Արցախի ժողովրդի անունից վերահաստատում եմ.

. Արցախցիների հաւաքական եւ անվտանգ վերադարձի իրաւունքը հանդիսանում է անսալարելի: Այն պէտք է իրականացուի միջազգային յուսակի երաշխիքների եւ մեր ժողովրդի հիմնարար իրաւունքների ու ազատութիւնների լիարժեք ապահովման պայմաններում:

. Պաքուի բանտերում շինծու մեղադրանքներով պահուող Արցախի ռազմաքաղաքական ղեկավարութեան եւ մեր միւս բոլոր հայրենակիցների անյապաղ ազատ արձակումը պէտք է լինի միջազգային հանրութեան առաջ-Նահեղթութիւններից:

. Բռնազաւթուած Արցախում հայկական պատմամշակութային ժառանգութեան ոչնչացումն ու իւրացումը մշակութային ցեղասպանութեան շարունակութիւնն են, որը պահանջում է միջազգային հանրութեան անյապաղ միջամտութիւնն ու կանխումը:

. Հայաստանի Հանրապետութիւնում ապաստանած արցախահայութեան կենսական կարիքների բաւարարումն առաջնահերթ հրամայական է: Այս ուղղութեամբ Եական Նշանակութիւնն ունի միջազգային հանրութեան շարունակական ու Նպատակային աջակցութիւնը՝ տեղահանուած բնակչութեան ընկերային կայունութիւնն ամրապնդելու եւ մարդասիրական մարտահրաւերները յաղթահարելու գործին:

Չնայած այսօր ստեղծուած ծանր աշխարհաքաղաքական իրավիճակին եւ բռնի տեղահանման դառնութեանը՝ արցախցիների համախմբուածութիւնը, ինքնութեան պահպանումն ու պայքարի շարունակականութիւնն այլընտրանք չունեն:

Մենք պարտաւոր ենք համատեղել ողջ հայութեան ներուժը՝ պաշտպանելու Արցախի ժողովրդի օրինական իրաւունքներն ու հասնելու պատմական արդարութեան վերականգնմանը:

Յաւերժ փառք մեր Նահատակներին:

Տոկունութիւն եւ կամք Արցախի ժողովրդին եւ համայն հայրութեանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԳԻՈՅ ԼՐԱՏՈՒՄԻՋՈՑՆԵՐԸ ԿԱՐԳԱՒՈՐՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ՆԵՐԿԱՅՑՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Սոֆիայի մէջ 16 սեպտեմբերին տեղի ունեցաւ Զեռուստատեսութեան եւ ծայնասփիւռի յանձնաժողովի Նախագահ Տիգրան Յալոյքեանի եւ Թուրքիոյ Չայնասփիւռի պատկերասփիւռի բարձրագոյն խորհուրդի Նախագահի տեղակալ Տենիզ Կիւլեթի հանդիպումը: Այս մասին «Նիուզ»-ին յայտնած են Զեռուստատեսութեան եւ ծայնասփիւռի յանձնաժողովէն:

Հանդիպումին ընթացքին կողմերը քննարկեցին հեռարձակման ոլորտին մէջ առկա զարգացումները եւ արդի մարտահրաւերները, ինչպէս Նաեւ կարգաւորող մարմիններու գործունեութեան վերաբերող շարք մը հարցեր:

Անդրադարձ կատարուեցաւ Հայաստանի եւ Թուրքիոյ կարգաւորող մարմիններուն միջեւ համագործակցութեան հետազայ զարգացման եւ ընդլայնման կարելիութիւններուն, որոնց կարգին՝ փորձառութեան եւ մասնագիտական գիտելիքներու փոխանակման, ոլորտային երկխօսութեան աշխուժացման եւ փոխադարձ հետաքրքրութիւն ներկայացնող Նախաձեռնութիւններու ծիրին մէջ համագործակցութեան, ինչպէս Նաեւ ընդգծուեցաւ միջազգային եւ շրջանային հարթակներու վրայ համագործակցութեան ընդլայնման կարեւորութիւնը:

Կողմերը կարելոք նկատեցին նման հանդիպումները շարունակականութիւնը՝ ընդգծելով երկխօսութեան կարեւորութիւնը հեռարձակման ոլորտի արդիւնաւետ կարգաւորման եւ նոր մարտահրաւերներուն համատեղ արձագանգելու տեսանկիւնէ:

Քննարկուեցաւ Համագործակցութեան յուշագրիի հաւանական ստորագրութիւնը, որուն Նախագիծը արդէն մշակման փուլի մէջ է:



SALTEK®
BAKERY EQUIPMENT

More than
3000 Projects

Producing
More Than
200,000 Pita
Breads/min

By SALTEK's
Lines All Around
The World!



Դ. ՂԱՍԱԿՎԱՐԳԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՀՄԸՄ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ, ԲԱՅՑ ՄՆԱՅ ԱՌԱԶԻՆ

ՀՄԸՄ Պեյրուֆի տղաքը երեկ, Սելաաթայի դաշտին վրայ բաւական դժուար մրցումէ մը ետք 4-1 արդիւնքով պարտութիւն կրեցին հիւսիսային Լիբանանի ախոյեան Արապի Աքքար Ռիատիի դէմ:

Կրնանք ըսել, որ մըրցումը գրեթէ եղաւ ի նպաստ մրցակից խումբին, որ առաջին անգամ ըլլալով կը խաղար իր ամբողջական կազմով այս աւարտական հանգրուանին՝ նկատի ունենալով, որ խումբէն մարզիկներ չաթուան մէջ կարողութիւն չէին կրնար ունենալ մասնակցելու:

ՀՄԸՄ-ի բերդապահը լաւ օրերու մէջ չէր եւ առնուազն 2 կոլերու մէջ յանցանքներ ունէր:

ՀՄԸՄ Պեյրուֆ իր դէմ ունեցաւ լաւ խմբային խաղ կիրարկող խումբ մը, եւ այդպէս թուեցաւ, թէ ՀՄԸՄ-ի տղաքը իրարու հետ առաջին անգամ կը խաղային:

Եղան սխալ փոխանցումներ, վերջին ճշգրիտ փոխանցումին պակասը իր մեծ ազդեցութիւնը ունեցաւ արդիւնքին վրայ, ՀՄԸՄ իր միակ կոլը նշանակեց



շնորհիւ Օմար Յոսարիի՝ 14-րդ վայրկեանին, այդ կոլը յոյս ներշնչած էր կարճ ժամանակի համար:

ՀՄԸՄ Պեյրուֆ ուրբաթ օր Սաֆայի դաշտին վրայ պէտք է անպայման յաղթէ Ճապապ Սաքաֆի Յերիին՝ բարձրանալու համար Գ. դասակարգ:

Աւարտականի նման խաղ մը կը սպասէ տղոց այս ուրբաթ, ուր համակիրներն ալ պէտք է ներկայ ըլլան՝ քաջալերելով եւ դառնալով 12-րդ մարզիկը:

20 ՏԱՐԵԿԱՆԷՆ ՎԱՐ ՄՐՅՈՒՄՆԵՐ

ՀՄԸՄ ՀԱՒԱՍԱՐԵՑԱԻ ՌԱՍԻՆԿԻ ՀԵՏ՝ 4-4 ԱՐԴԻՒՆՔՈՎ

Լիբանանի երիտասարդներու (20 տարեկանէն վար) ախոյեանութեան գտումի իր վերջին մրցումին, ՀՄԸՄ-ի տղաքը բաւական բացակայ մարզիկներով չկրցան յաղթել Ռասինկին:

Մրցումը առաւօտեան ժամը 10:00-ին էր, եւ որովհետեւ Կի Խանճեան, Յակոբ Ապտալեան եւ Օմար Յոսարի քանի մը ժամ ետք Գ. դասակարգ բարձրանալու աւելի կարեւոր մրցում ունէին, չմասնակցեցան այս մըրցումին:

Բայց պէտք է ըսել, որ տղաքը բաւական լաւ էին եւ նոյնիսկ 4-2 արդիւնքով ետ մնալէ ետք կրցան 4-4 արդիւնքով աւարտել մրցումը՝ շնորհիւ իրենց պայքարի ոգիին եւ յաղթանակի կամքին: Դժբախտաբար, խումբը չկրցաւ ախոյեանութեան մասնակցելու



իրաւունք ստանալ՝ դուրս մնալով գտումի մրցումներէն, բայց տղաքը շատ գեղեցիկ ֆութպոլ խաղցան եւ տպաւորեցին նոյնիսկ մրցակիցները:

«ԷՍ. ԷՍ. ԷՅ.»

ՎԱՐԴԳԷՍ ՎԱՐԱԳ ՀԱՇԵՕԼԵԱՆ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՌՈՅԵԱՆ

Անցեալ շաբաթավերջին, Մոն Լա Սալի մէջ տեղի ունեցաւ խառն մարտական մարզածներու («ԷՄ. ԷՄ. Էյ.») պրագիական ճիւղ Ճիթսու մարզածեի Լիբանանի ախոյեանութիւնը:

Ծանր կշիռի մրցումներուն, Լիբանանի ախոյեան դարձաւ Վարդգէս Յաշէօլեան, աւարտականին յաղթելէ ետք անցեալ տարուան ախոյեանին:

Ըմբշամարտի կրեփիլինկի մարզիկ «Վագօ» Յաշէօլեան, որ Յամազգայինի Մ. եւ Յ. Արսլանեան ճեմարանը եւ Լիբանանի ամերիկեան համալսարանը աւարտած է, 24 տարեկան է եւ աւելի քան 3 տարիներէ ի վեր կը մարզուի Լիբանանի միակ մարտական ակումբին՝ «Ֆայթ լայֆ»-ի մէջ:

Ժաք Սիփիլեանի եւ Ժուլիան Աշքարի հետ մարզուելով՝ Վագօ Յաշէօլեան երկու տարիէ ի վեր կը մասնակցի Լիբանանի տարբեր մրցաշարքերուն եւ ախոյեանութիւններուն:

Այս տարի մայիս ամսուան, Լիբանանեան բանակի կազմակերպած Ճիւղ Ճիթսու ախոյեանութեան, Վագօ Յաշէօլեան հասած է աւարտականին եւ 4 կէտերու առաւելութեամբ դարձած է ախոյեան՝ յաղթելով վերջին 3 տարիներու ախոյեանին:

Յետաքրքրականը այն է, որ երբ ծանր կշիռ ըստեք, այսինքն՝ 95 քիլոկրամէն աւելի որբէւ կշիռ, Վագոյի մրցակիցը կրնայ հասնիլ մինչեւ 150 քիլոկրամի ալ, մանաւանդ որ այս կշիռի բաց դրութիւնը շատ դժուար ալ կրնայ ըլլալ:

Պէտք է ըսել, որ Լիբանանի Ճիւղ Ճիթսուի ախոյեանութեան, «Ֆայթ լայֆ» ակումբը իր մասնակցութիւնը բերած էր այս մրցաշարքին 7 մարզիկներով, որոնցմէ, ինչպէս նշեցինք, Վագօ Յաշէօլեան շահեցաւ ոսկի մետալ, 3 մարզիկներ նուաճեցին արծաթ



մետալներ, մինչ մէկ մարտիկ ալ շահեցաւ պրոնզէ մետալ:

Յաջողութիւն պիտի մաղթենք Վարդգէս Վարագ Յաշէօլեանին եւ իր ընտանիքին՝ մաղթելով անոր փայլուն ապագայ թէ՛ մարտական խաղերու եւ թէ՛ կենսքի ընթացքին:

ՃԱՏՐԱԿ

ՏՂՈՑ ՀԱՒԱՔԱԿԱՆԸ ԻՐ 4-ՐԴ ՅԱՂԹԱՆԱԿԸ ԱՐՉԱՆԱԳՐԵՑ, ԱՂԶԻԿՆԵՐԸ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ ԿՐԵՑԻՆ ՂԱԶԱԽՍԱՏԱՆԷՆ

Հայաստանի ճատրակի հաւաքականները կը շարունակեն իրենց ելոյթները Սամարղանտի մէջ տեղի ունեցող 46-րդ ճատրակի Օլիմպիատային:

Առաջին երկու հանգրուաններուն յաղթելէ ետք, զոյգ հաւաքականները երրորդ հանգրուանին ալ կրցան յաղթել իրենց մրցակիցներուն:

Տղաքը 2,5-1,5 արդիւնքով յաղթեցին Շուէտին: Վճռորոշ դարձաւ Գաբրիէլ Սարգսեանի յաղթանակը՝ Էրիք Պլոմբլիսթի դէմ, մինչ Յայկ Մարտիրոսեան, Շանթ Սարգսեան եւ Մանուէլ Պետրոսեան հաւասարութեամբ աւարտած էին իրենց մըրցումները:

Աղջկանց երրորդ մրցակիցն էր Խորաթիան: Լիլիթ Սկրտչեան, Մարիամ Սկրտչեան, Էլիսա Դանիէլեան եւ Սուսանա Գաբոյեան կրցան իրենց մրցակիցներուն յաղթել՝ 4-0 արդիւնքով աւարտելով ճակատումը: 4-րդ հանգրուանի մրցումներուն, տղոց հաւաքականը 2,5-1,5 արդիւնքով պարտութեան մատնեց Արժանիքը: Շանթ Սարգսեանի յաղթանակը



շատ կարեւոր եղաւ Սանտրո Մարեքոյի դէմ, մինչ Յայկ, Ռուպերթ Յովհաննիսեան եւ Գաբրիէլ հաւասարութիւններ արձանագրած էին իրենց մրցումներուն:

Աղջկանց հաւաքականը իր 4-րդ հանգրուանի ճակատումին 3-1 արդիւնքով պարտուեցաւ Ղազախստանի դէմ:

Լիլիթ Սկրտչեան եւ Սուսանա Գաբոյեան պարտութիւններ կրեցին, մինչ Մարիամ Սկրտչեան եւ Էլիսա Դանիէլեան կէսական կէտեր շահեցան հաւասարութիւններէ ետք:

5-րդ հանգրուանին, տղաքը պիտի մրցին Չինաստանի դէմ, մինչ աղջիկները պիտի մրցին Փերուի դէմ:

ԵՈՒ. ԷՃ. ՍԻ.

ԱՐՄԱՆ ԾԱՌՈՒԿԵԱՆ ՆԱԲ-ԱՌՈՒԹԻ ԵՆԹԱՐԿԵՑ ՌՈՒՖԻՆ

Երեկ առաւօտեան ժամերուն հայազգի մարտիկ Արման Ծառուկեան (24-3) տպաւորիչ յաղթանակ տարաւ Լոս Անճելէսի մէջ տեղի ունեցած «ԵՈՒ. ԷՃ. ՍԻ. 331» մըրցաշարքի կարեւորագոյն մենամարտերէն մէկուն:

Թեթեւ կշիռքի լաւագոյն մարզիկներէն նկատուած Ծառուկեան, առաջին ռաունտի աւարտէն 4 երկվայրկեան առաջ, նաք-աւօթի ենթարկեց պրագիցի Մաուրիսիօ Ռուֆին, որ իր կարգին «ԵՈՒ. ԷՃ. ՍԻ.»-ի թեթեւ կշիռքի դժուարագոյն մրցակիցներէն մէկն էր:

Առաջին ռաունտը աւարտելու վրայ էր, երբ Արման արմուկի հարուածով մը ցնցեց Ռուֆին. հարուած մը եւս, եւ մըրցակիցը գետին տապալած էր, մինչ իրաւարարը հեռացուց Արման Ծառուկեանը՝ վերջ տալով մըրցումին:

Մինչեւ այդ պահը մենամարտը բաւական հաւասարակշռուած էր, ուր Արման Ծառուկեան յաճախ կը փորձէր գետին բերել իր մրցակիցը, որ աւելի վստահած էր բռնուցքին եւ ըմբշամարտի ճկունութիւն չուներ:

Արման Ծառուկեանի ուժը իր կրեփ-



Արման Ծառուկեան

այլեւ կասկած չունեցաւ, որ Արման Ծառուկեան արժանի է տիտղոսի մըրցումի մը: Պէտք է ըսել նաեւ, որ Արման Ծառուկեանի յաղթանակը իր 6-րդ յաջողական յաղթանակն էր:

Նոյն մրցաշարքին զծով, հայազգի մարտիկ մը եւս՝ Էդմէն Ճաիբագեան միջին կշիռքի իր մենամարտին կէտերու առաւելութեամբ (իրաւարարներու



Էդմէն Ճաիբագեան

լինկի, հմտութեան եւ զանազան խաղաոճերու տիրապետութեան մէջ է:

Այս ցնցիչ յաղթանակէն ետք, «ԵՈՒ. ԷՃ. ՍԻ.»-ի նախագահ Տանա Ուայթ

որոշումով) պարտութեան մատնեց պրագիցի Պրոնսօ Ֆերէյրան: Երեք իրաւարարներն ալ յաղթանակը շնորհեցին Էդմէնի (29-28, 29-28 եւ 30-27):

L'ORA

JEWELRY OF THE MOMENT

BY GARABET K JABOTIAN

MOBILE: +961 70 988 888
TEL: + 961 1 249 000
FAX: +961 1 249 200
GARO@JABOTIAN.COM

BOURJ HAMOUD, BANK CREDIT LIBANAI BLDG.
1ST FLOOR BEIRUT, LEBANON

WWW.JABOTIAN.COM

ԱՐՍԷՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ...

Շարունակուած Ա. Էջէն

Ասիկա Տէ Սանթոյի առաջին պարտութիւնն էր 3 յաջորդական յաղթանակներէ տեղ, եւ քահի մը ամիս առաջ ան Փան-Ամերիքըն խաղէրու ախոյեան դարձած էր:

Հագիւ շահած տիտղոսը, Արսէն Յարութիւնեան իր յաղթանակը նուիրեց Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա. վեհափառ հայրապետին, հայ ժողովուրդին եւ բոլոր անոնց, որոնք հաւատքով, նուիրումով եւ հաստատ կամքով կը քալեն իրենց նպատակներուն եւ երազներուն իրագործման հասնելու: «Թող իւրաքանչիւրիս յաղթանակը դառնայ մեր ժողովուրդի հպարտութեան եւ միասնութեան մէկ մասսիկը», նշեց Արսէն Յարութիւնեան:

Աւելի ուշ, Յարութիւնեան ընկերային ցանցերու վրայ գրեց. «Ախոյ-



եանութեան գօտին Հայաստան կը բերեմ: Ինծի համար մեծ պատիւ է դառնալ ՌԱՖ-ի առաջին ոչ ամերիկացի ախոյեանը»:

Նշենք, որ Արսէն Յարութիւնեան անցեալ 27 օգոստոսին այցելած էր Լիբանան՝ ստանալու համար Արամ Ա. վեհափառ հայրապետին օրհնութիւնը:

ՌԻՐ ԵՆՔ...

Շարունակուած 6-րդ էջէն

Պետութիւն մը կը զօրանայ, երբ հասարակութիւնը գիտե՝ պետութիւնը ո՞րը կ'երթայ...

Հետզհետէ հրամայական կը դառնայ այլընտրանքի կայացման շուրջ համաժողովրդային համոզում յառաջացնելը:

Եւ վերջապէս՝ սփիւռքը:

Մենք ալ իրաւունք չունինք միայն մատնացոյց ընելու Երեւանը:

Տասնամեակներ շարունակ խօսած ենք համահայկական ներուժի մասին: Ո՞րը է այդ ներուժը այսօր: Հայ ժողովուրդը աշխարհի տարբեր երկիրներու մէջ ունի՝ միջազգային իրաւունքի մասնագէտներ, տնտեսագէտներ, գինւորականներ, դիւանագետներ, գիտնականներ, արհեստագէտներ, համալսարանի դասախօսներ, գործարարներ եւ քաղաքական փորձառութիւն ունեցող անձեր:

Ինչո՞ւ չունինք մնայուն համահայկական ռազմավարական կեդրոններ, որոնք ամէն օր պիտի ուսումնասիրեն՝ Թուրքիան, Ազրպէյճանը, Իրանը, Ռուսիան, Միացեալ Նահանգները, Եւրոպական Միութիւնը:

Ինչո՞ւ Հայաստանը մեծ որոշումներու ժամանակ միշտ կը սկսի գրեթէ զերոյէն:

Ինչո՞ւ սփիւռքը յաճախ աւելի կազմակերպուած է կուսակցական հակամարտութիւններուն մէջ, քան՝ Հայաստանի պետական անվտանգութեան հարցերուն շուրջ:

Սփիւռքը պէտք չէ կառավարուի Երեւանէն, ո՛չ ալ Երեւանը՝ սփիւռքէն: Սփիւռքը ազգային գործընկեր է եւ իր հսկայական կարողութիւնը պէտք է ծառայեցնէ հայկական պետականութեան հզօրացման:

Երեսունհինգ տարիներու դատաստանը

Անշուշտ երեսունհինգ տարիները միայն պարտութիւններու պատմութիւն չեն: Հայաստանը կառուցեց պետական հաստատութիւններ: Աշխարհին վրայ կայ Հայաստանի Հանրապետութիւն անունով միջազգային իրաւունքի ինքնիշխան պետութիւն: Սերունդ մը ծնաւ ու մեծցաւ անկախ երկրի մէջ: Ստեղծուեցան՝ բանակ, դիւանագիտական համակարգ, տնտեսութիւն, համալսարաններ, արհեստագիտական ներուժ: Եղան յաղթանակներ: Եղան վերելքներ:

Սակայն պատմութիւնը ժողովուրդները կը դատէ ոչ միայն անոնց ունեցածով, այլ նաեւ՝ անոնց պահպանածով:

1991-ին մենք անկախութեան ճաւապարհը սկսանք արցախեան շարժման վերելքով, ազգային համախմբումով եւ յաղթանակի հաւատքով:

2026-ին Արցախը հայաթափուած է: Հարիւր հազարաւոր արցախահայեր հեռացած են իրենց հայրենիքէն: Հայաստանի սահմաններուն անվտանգութիւնը կը մնայ մտահոգիչ: Խաղաղութեան վերջնական համաձայնագիրը կը մնայ արտաքին պայմանաւորումներու առարկայ: Մեր սահմանադրութեան մասին կը խօսի հակառակորդ պետութեան ղեկավարութիւնը: Մեր արտաքին տնտեսական ուղղութեան շուրջ Մոսկուան ու Պրիւքսելը հակադիր սպասումներ ու-

ՄՈՒՍԱ ԼԵՐԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ 111-ԱՄԵԱԿԻ ...

Շարունակուած Ա. Էջէն

Ուրբաթ, 18 սեպտեմբեր 2026-ին, ԼՕԽ-ի «Աղթամար» մասնաճիւղին կազմակերպութեամբ տեղի ունեցաւ տոհմիկ երեկոյ, ՀՄԸՄ Այնճարի «Սարգիս եւ Ծովիկ Չէյթեան» մարզամշակութային համալիրին մէջ, ներկայութեամբ հոծ բազմութեան: ԼՕԽ-ի «Աղթամար» մասնաճիւղի եւ ԼՕԽ-ի Շրջանային վարչութեան խօսքերը ուղղեցին յաջորդաբար Աշխէն Չափարեան եւ Միւզի Նաշալեան: ՀՅԴ «Կարմիր լեռ» կոմիտէին խօսքը ուղղեց Շահան Փանոսեան: Խօսք առաւ նաեւ Այնճարի քաղաքապետ Սեդրակ Հաւաթեան: Տեղի ունեցաւ գեղարւեստական յայտագիր:

Շաբաթ, 19 սեպտեմբեր 2026-ին, երեկոյեան ժամը 8:30-էն սկսեալ, տեղի ունեցաւ Մուսա լեռան հերոսամարտի 111-ամեակի եւ Այնճարի հիմնադրութեան 87-ամեակի պաշտօնական հանդիսութիւնը, Մուսա լեռան յուշարձան-համալիրին կողքին: Ներկայ էին Լիբանանի մէջ Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս Սեդրակ Սարգսեան եւ ռազմական կցորդ Արթուր Դալիբալթեան, Հայկական Երեսփոխանական պլոքի անդամ, Երեսփոխան Յակոբ Թերզեան եւ պատկան մարմիններու ներկայացուցիչներ: Օրուան պատգամը ուղղեց ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ Ալպեր Պալապանեան, որ հաստատեց, որ Մուսա լեռը հայ ժողովուրդի կամքի, միասնակաւութեան եւ գոյատեւելու անսասան վճռականութեան խորհրդանիշն է, իսկ Այնճարը՝ անոր շարունակութիւնն ու նոր բերդը: Մուսա լեռան պատգամը մեզի կը թելադրէ չիրաժարիլ, չմոռնալ եւ չբաժնուիլ, այլ համախմբուած պահել մեր ազգա-

յին ինքնութիւնն ու հայրենիքի տեսլականը:

«Թող հերոսներուն աւանդը մեզ մղէ զօրացնելու Հայաստանը, պահպանելու սփիւռքի ու Այնճարի հայեցի դիմագիծը եւ միասնական ուժով կերտելու մեր ազգային ապագան», նշեց Ալպեր Պալապանեան:

Գեղարուեստական յայտագիրով իրենց մասնակցութիւնը բերին Այնճարի գոյգ վարժարաններու աշակերտները եւ Համազգայինի «Պարոյր Սեւակ» մասնաճիւղի «Կաքաւիկ» մանկապատանեկան երգչախումբը: Ազգային- հայրենասիրական երգերով հանդես եկաւ երգիչ Ղազար Զեօշկերեան: (Ալպեր Պալապանեանի խօսքը ամբողջութեամբ կու տանք հետագային):

Կիրակի, 20 սեպտեմբեր 2026-ին, առաւօտեան ժամը 10:00-ին, տեղի ունեցաւ սուրբ եւ անմահ պատարագ, հոգեհանգստեան արարողութիւն, մատաղի օրինութիւն եւ բաշխում, ինչպէս նաեւ Հայաստանի անկախութեան վերականգնման 35-րդ տարեդարձի նշում եւ Եռագոյնի օրհնութիւն՝ հանդիսապետութեամբ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Շահէ արք. Փանոսեանի, Այնճարի Ս. Պօղոս եկեղեցւոյ մէջ: Ներկայ էին Լիբանանի մէջ Հայաստանի դեսպան Սարմէն Պաղտասարեան, Նախկին Նախարար Վրէժ Սպալունճեան, պատկան մարմիններու ներկայացուցիչներ եւ հաւատացեալներու հոծ բազմութիւն մը:

Այնճարի մէջ տեղի ունեցած ձեռնարկներուն եւ արարողութիւններուն աւելի մանրամասն կ'անդրադառնանք հետագային:

ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄԷՆ ՀՈՉԱԿԱԳԻՐ ...

Շարունակուած Ա. Էջէն

Անկախութեան հռչակումէն առաջ, Գերագոյն խորհուրդը որդեգրած էր Նախագահական կառավարման վարչաձեւը: Սահմանադրական հանրաքուեով որդեգրուած առաջին սահմանադրութիւնը 1995-ին Նախագահական շեշտուած կառավարման նկարագիր ուներ: 2005-ին հանրաքուեով հաստատուած երկրորդ սահմանադրութիւնը կը հաստատեր կիսանախագահական վարչաձեւ, իսկ 2017-ին որդեգրուած եւ 2018-ին գործադրուած սահմանադրութիւնը հաստատեց խորհրդարանական կառավարման վարչաձեւ: Երեք սահմանադրութիւնները իրենց Նախաբանին մէջ կը յիշատակէն Անկախութեան հռչակագիրը: Ընդունուած է, որ սահմանադրութիւններուն Նախաբանները մաս կը կազմեն անոնց: Անկախութեան հռչակագիրը ուրեմն մաս կը կազմէ գործող սահմանադրութեան:

Հայաստանի կառավարութիւնը ձեռնարկած է նոր, չորրորդ սահմանադրութեան մը մշակման Հայաստանի եւ Ազրպէյճանի միջեւ Նախաստորագրուած (համաձայնեցուած) խաղաղութեան պայմանագրի ստորագրման համար Ազրպէյճան

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

Շարունակուած 7-րդ էջէն

● «ՏԻԱՐ» օրաթերթի հաստատ տեղեկութիւններուն համաձայն, «կացութեան ներկայ վատթարացման պատճառով Նախարարական փոփոխութիւններ կատարելու գաղափարը պաշտօնատարներուն միջեւ հաղորդակցութիւններէն ետք տարածուած Է՝ կառավարութեան եւ ժողովուրդին դրական խթան հաղորդելու նպատակով»:

● ԻՍՐԱՅԷԼԵԱՆ «Մաարիւ» օրաթերթ. «Իսրայելեան բանակին մէջ մտավախութիւն կայ, որ Չըզպալլան յառաջիկայ ծմրան եղանակը օգտագործելով՝ մշուշէն օգտուելով ներթափանցէ եւ լարէ ականներ, որոնք հարաւային Լիբանանի մէջ խրայլեան բանակի ուժերը կը թիրախաւորեն»:

● ԼԱՒԱՏԵՐԵԱԿ աղբիւրներ «Նիտա Ուաթան» օրաթերթին. «Տեյր Միմասի միջադէպը գործնական օրինակ տուաւ, թէ պետութիւնը ինչպէ՛ս կը կառավարէ հարաւային Լիբանանի մէջ Իսրայելի կողմէ որեւէ բախում կամ խախտում՝ ամրապնդելով այդտեղ գտնուող օրինական գինւորական ներկայութիւնը եւ զայն կապելով միջազգային համակարգման եւ հաղորդակցման ուղիներու հետ»:

● ՍՈՒՐԻ եւ Պընթ ժպէյի գաւառներու գիւղերէն ու գիւղաքաղաքներէն եկողներ «Անպա Էլեթթօր-նիա»-ին. «Գիւղերուն մէջ ապրիլը անկարելի դարձաւ, երբ թշնամին զանոնք վերածեց անապատի՝ առանց ջուրի, առանց կեանքի, առանց անվտանգութեան եւ առանց ապահովութեան»:

● «ԱՆՊԱ ԷԼԵԶԹՐՈՆԻԱԿ»-ի դաշտային տեղեկութիւններուն համաձայն, «Իսրայելեան բանակը դիտաւորեալ կերպով կրակի տուաւ Մէյս ժապալի հիւանդանոցը, եւ բոցերը տարածուեցան հիւանդատար մեքենաներուն, մագուրթի պահեստանոցներուն եւ բժշկական բոլոր պարագաներուն»:

● ՍԵՉԱՐ Ապի Խալիլ «Սաութ Թուլ Լուպան»-ին.

«Կառավարութեան գործունեութեան քննարկման նիստը թերացման ծաւալը ցոյց տուաւ եւ հակապտութիւններ բացայայտեց կառավարութեան մէջ, որուն բաղկացուցիչ կողմերը չեն կրնար անոր վստահութեան քուէ շնորհել, ապա անմեղ ձեւանալ»:

● «ԼԵՊԱՆՈՆ ՖԱՅԼ2»-ի համաձայն, շարք մը հաստատութիւններ այսօրուքն սկսեալ դիմած են աշխատանքի ժամը օրական մէկ ժամով կրճատելու քայլին՝ Ելէկտրականութեան հաշուեցոյցի գիւնը նուազեցնելու եւ գործառնական բեռը նուազեցնելու նպատակով:

● ՏՆՏԵՍԱԿԱՆ ականաւոր աղբիւր մը «Լեպաւոն Ֆայլզ»-ին մտավախութիւն յայտնած է, որ նաւթամթերքի գիւներու շարունակուող բարձրացումը յանգեցնէ Լիբանանի մէջ բազմաթիւ հաստատութիւններու եւ աշխատատեղիներու փակման՝ իբրեւ հետեանք մեծ աճին փոխադրութեան եւ Ելէկտրականութեան գիւներու, որոնք տնտեսական ներկայ կացութեան մէջ ընկերութիւններուն եւ հաստատութիւններուն համար հիմնական բեռ կը ներկայացնեն:

● «ԼԵՊԱՆՈՆ ՖԱՅԼ2»-ի տեղեկութեան համաձայն, Ելէկտրածին շարժակներու սեփականատերերու մեծամասնութիւնը բաժանորդները կը զգուշացնեն մագուրթի գիւներու ահաւոր բարձրացման լոյսին տակ իբրեւ անխուսափելի ընտրանք խնայողութեան դիմելէ, որովհետեւ մագուրթի մէկ թոնը հասած է շուրջ 1500 տողարի, եւ շարժակներու շահագործման ծախսերը դարձած են Ելէկտրածին շարժակներու սեփականատերերէն շատերուն համար անտանելի, ինչ որ բաժանորդները կ'ենթարկէ երկար ժամերով Ելէկտրականութեան չգոյութեան վտանգի, ինչ որ Ելէկտրականութեան ճգնաժամը կրնայ վերադարձնել իր վատագոյն ժամանակին: